



ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր
բնակավայրի Թատերական փողոց Յա հասցեում
նախատեսվող դրամատիկական թատրոնի կառուցման

ՇՄԱԳ հաշվետվություն

2025թ. սեպտեմբեր


ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈԽՈՑ ՅԱ ՀԱՍՑԵՈՒՄ Հ.
ԱԲԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ
ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
(ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝



Մ. Թևոսյան

Երևան, 2025թ.



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇԿ	Շինարարության կապալառու
ԲՀՏ	Բնապահպանության և հանքարդյունաբերության տեսչություն
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՄԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԱԱՇՄ	Առողջություն, անվտանգություն, շրջակա միջավայր
ԻԳ	Իրականացնող գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՍԿ	Սպասարկման (շահագործման) կապալառու
ԾԱԱ	Ծրագրի ազդակիր անձինք
ՖՄՌ	Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	5
2.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	5
3.	ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	6
3.1.	ՀՀ ազգային օրենսդրությունը	6
3.2.	Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին	13
3.3.	Վարչական (կազմակերպական) շրջանակը	15
4.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	18
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
5.1.	Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը	25
5.2.	Մեյամիկա և երկրաբանություն	28
5.3.	Հիդրոերկրաբանություն	31
5.4.	Կլիմա և օդային ավազան	32
5.5.	Մթնոլորտային օդ	34
5.6.	Աղմուկ և թրթռում	36
5.7.	Ջրային ռեսուրսներ	37
5.8.	Հողային ռեսուրսներ	39
5.10.	Բուսական և կենդանական աշխարհ	40
5.10.1	Կենդանական և բուսական աշխարհ	40
5.11.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	43
5.12.	Պատմամշակութային հուշարձաններ	43
5.13.	Բնության հուշարձաններ	44
5.14.	Սոցիալական և մշակութային ռեսուրսներ	45
6.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ	50
6.1.	Նախատեսվող գործունեության բնութագիրը	50
6.2.	Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ	51
6.3.	Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը	62
7.	ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	62
7.1.	«Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ	62
7.2.	Ծրագրի առավելությունները	63
8.	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ	64
8.1.	Ջուր	64



8.2. Օգտագործվող նյութեր.....	65
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	65
9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները	66
9.1.1. Օդային ավազան.....	66
9.1.2. Ջրային ավազան.....	70
9.1.3. Թափոնների կառավարում	70
9.1.4. Հողային ռեսուրսներ	71
9.1.5. Կենսաբազմազանություն.....	71
9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ	72
9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ	73
9.1.8. Արտակարգ իրավիճակներ.	73
9.1.9. Աղմուկ և թրթռում	73
9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում	74
9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն.....	75
9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ.....	76
9.1.13. Բարեկարգում և կանաչապատում	76
9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները դրամատիկական թատրոնի շահագործման փուլում	78
9.2.1. Օդային ավազան.	78
9.2.2. Ջրային ռեսուրսներ.....	78
9.2.3. Թափոնների կառավարում	78
9.2.4. Հողային ռեսուրսներ	78
9.2.5. Կենսաբազմազանություն.....	78
9.2.6. Աղմուկ.....	78
9.3. Սոցիալական ծրագիր.....	79
10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....	79
11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	80
ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	81
ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	97
ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱՂԻՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂԻՎԱՆՔ.....	99



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող	«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
Էլեկտրոնային հասցե	armshin_ltd@mail.ru info.consecoard.am
Նախատեսվող գործունեության անվանումը	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց Յա հասցեում նախատեսվող Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցում (քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով («Բ» կատեգորիա», Կետ 8, քաղաքաշինության բնագավառ, ենթակետ՝ ա))
Նախատեսվող գործունեության նպատակը	Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցում
Նախատեսվող գործունեության իրականացման վայրը	ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր համայնք, Վանաձոր բնակավայր, Թատերական փողոց Յա
ՇՄԱԳ հաշվետվության մշակող	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Պետական ռեգիստրի գրանցման համարը	88.110.00902
Գրանցման տարեթիվը	22.05.2006

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող թատրոնի շենքը կառուցվելու է սեփականության իրավունքով
Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ին
պատկանող հողամասում, որը գտնվում է ՀՀ լոռու մարզի Վանաձոր համայնքի
Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց Յա հասցեում: Տարածքի ընդհանուր
մակերեսը կազմում է 0.3846 հա (սեփականության վկայականը ներկայացված է



Հավելված 2-ում): Թատրոնի ճարտարապետական կերպարը ձևավորված է ժամանակակից ուղղությամբ՝ ընդգծված ճակատային կառուցվածքով, շեշտված բեմի ծավալով, բաց մուտքային տարածքներով և ընդարձակ ֆոյեով: Ընդհանուր ծավալը բաղկացած է մի քանի բլոկներից՝ հանդիսատեսի դահլիճ, բեմ և բեմի հետևի տեխնիկական գոտի, ադմինիստրատիվ և օժանդակ տարածքներ, ինչպես նաև արտիստների սենյակներ ու վերելակային հաղորդակցում: Շենքի հատակագծային կազմակերպումն ունի համաչափ և հստակ բաժանում՝ ըստ ֆունկցիոնալ գոտիների՝ ելնելով տրոֆիկայի, հոսքերի տարանջատման և անվտանգության պահանջներից:

Տարածքում առկա են որոշ շենք-շինություններ, որոնք Ծրագրի իրականացման շրջանակներում որոշակիորեն կապամոնտաժվեն, մասնավորապես՝

- հիմնական շենք՝ Հ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոն,
- շենքի հետևի ճակատին կից ավտոտնակ (114.0 քմ),
- կաթսայատուն՝ (34,0 քմ),
- կաթսայատնից 1,0 մ հեռ. օժանդակ շինություն (14,0 քմ),
- ջրավազան,
- տաղավար:

Տարածքը գտնվում է Վանաձոր բնակավայրի կենտրոնական մասում (ամայնապետարանի շենքից մոտ 700մ դեպի արևելք), որտեղ հարևանությամբ առկա են նաև բնակելի շենք-շինություններ: Գործունեության ընթացքում հարակից բնակելի տների վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու կամ նվազեցնելու նպատակով մշակվել են մեղմացնող միջոցառումներ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 1-ում (ԲԿՊ):

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է նախատեսվող գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:



Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենք (հունիսի 21, 2014): Սույն հաշվետվությունը մշակվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (մայիսի 3, 2023) օրենքի դրույթների և պահանջների:

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական որորտը կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

➤ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),

➤ «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.),

➤ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),

➤ «Բուսական աշխարհի մասին» (1999) օրենք,

➤ «Կենդանական աշխարհի մասին» օրենք (2000),

➤ «ՀՀ հողային օրենսգիրք» (2001),

➤ «Հիդրոթերմալ ռեսուրսների գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),

➤ «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),

➤ «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),

➤ «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002),

➤ «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),

➤ «Թափոնների մասին» օրենք (2004),

➤ «Ջրօգտագործողների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),

➤ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),

➤ «Անտառային օրենսգիրքը» (2005),

➤ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),



- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Սևանա լճի մասին ՀՀ օրենքը (2001),
- «Հողի օգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008 թ.),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում,
- ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,
- «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում,
- ՀՀ Կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սեյսմիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են՝

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը



հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու
ընդհանուր պահաջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի
աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը
հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի
որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող
պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ
1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.11.2017 թիվ 1404-Ն), ինչպես
նաև 02.11.2017 N1404-Ն որոշումները:

ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն
աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման
կարգը» ընդունվել է ՀՀ փոխվարչապետի N1352-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների
օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի
Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի
Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին»
օրենքով:

ՀՀ մակերեսային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ
կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի
առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման
տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն
օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից
պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության
ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց
իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված
հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ.
նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում
է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է
այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու
իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի
իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ



աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա” և “Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունն իրանացվում է մեկ փուլով՝ երկու հանրային լսումներով: Առաջին հանրային լսումը կազմակերպվում է ազդակիր համայնքի կողմից: Հանրային լսումից և քննարկումից հետո, քննարկման նյութերը, ՇՄԱԳ հաշվետվությունը և օրենքով պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննությունը տևում է 80 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են երկրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքն ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում



ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը:

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:



Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»

Նշված սանիտարական նորմերով սահմանվում են աղմուկի դասակարգումը, նորմավորվող պարամետրերը և աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակներն աշխատատեղերում, բնակելի, հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում:

Առողջապահության նախարարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:



3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրով թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1993	1993	Որպես իրավահաջորդ անդամա կցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000)	2004	2000	2004	
4	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Ելու Յոքո, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)	2005	1997	2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)	1997	1979	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա	1997	1991	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ



	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
7	միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.)				
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2011	2003	2010	
8	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Շելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
	Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003)		2003		
9	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1997	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ
10	Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1999	1989	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
11	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1999	1987	1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ
12	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)	2001	1998	2001	
13	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998)	2003	1998	2003	
14	ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Շելսինկի, 1992թ.)	1997	1992	1996	
	Ջրի և առողջության մասին				Վավերացման



	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվ ել է	Վավերա ցվել է	Մեկնաբանությու ն
	արձանագրություն (Լոնդոն, 1999)				գործընթացում է
15	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
16	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976)	2002	1976	2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ
17	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենս, 2000)	2004	2000	2004	
18	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993	1972	1993	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.
19	Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.)		1994		
	Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ Էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994)		1994		
20	Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)	2008	1979	2008	

3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը եւ պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

Իրականացնող գործակալություն (ԻԳ)

Ներկայացվող գործունեության պատվիրատու է հանդիսանում՝ ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեն, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3:

Մասնավորապես ՇՄՍԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝



➤ Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:

➤ Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➤ Համոզվել, որ կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

➤ Կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

Շինարարական Կապալառու (ՇԿ)

Նախատեսվող դրամատիկական թատրոնը կառուցելու է շինարարական կապալառու ընկերությունը:

Կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:



ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Զրային տնտեսության պետական կոմիտե:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում է իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.



Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,
- Հանրային առողջության բաժին,
- և այլն:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախատեսվող թատրոնի շենքը կառուցվելու է սեփականության իրավունքով Վանաձորի Հովհ. Աբելայնի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է ՀՀ լոռու մարզի Վանաձոր համայնքի վանաձոր բնակավայրի Թատերական փողոց Յա հասցեում: Այն գտնվում է Վանաձոր բնակավայրի կենտրոնական մասում, համայնքապետարանից մոտ 700մ դեպի արևելք:

Տեղանքի հարակից տարածքների նկարագրություն

- Հյուսիսից՝ Դպրոցի տարածք, Քարհանյան դպրոց, 7,0-10,6մ հեռավորության վրա,
- Հարավից՝ ազատ հրապարակ, կենտրոնական մասում Հ. Աբելայնի արձան, Թումո կենտրոնի շենք, նախկին Սպայի տուն,
- Արևմուտքից՝ Թատերական փողոց, բազմաբնակարան բնակելի շենքեր,
- Արևելքից՝ շինության բակային տարածք, Թատերական փողոց:

Հողամասում առկա շինությունների նկարագրություն

- Գոյություն ունեցող շենքեր և կառույցներ՝ հիմնական շենք՝ Հ. Աբելայնի անվան դրամատիկական թատրոն (քանդվող), շենքի հետևի ճակատին կից ավտոտնակ (114.0 քմ, քանդվող) , կաթսայատուն՝ (34,0 քմ, քանդվող), կաթսայատնից 1,0 մ հեռ. օժանդակ շինություն (14,0 քմ, քանդվող), էլ. ենթակայան (56.0 քմ, պահպանվող), ջրավազան՝ քանդվող, տաղավար՝ քանդվող:
- Նոր կառուցվող շինության տեղակայման սկզբունքը՝ հաշվարկված է ֆունկցիոնալ, ճարտարապետական ու ինստյացիոն պահանջներով, դիմացի ճակատի գլխավոր մուտքային հատվածի պահպանման հաշվին, տեղակալման հստակ սահմանազծով:
- Նոր կառուցվող կաթսայատան շենք – 24,0 քմ, շենքից և էլ. կայանից բավարար հեռավորության վրա, բացօթյա ամֆիտատրոն բակային



հատվածում:

- Նախատեսված է շենքի հետևի կողմում աշխատակիցների համար ավտոկայանատեղի, անմիջապես աշխատակիցների համար նախատեսված մուտքին կից:
- Նախատեսվում է բարեկարգում, և նոր ծառերի տնկում:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Ստորև ներկայացված են նախատեսվող գործունեության կադաստրային կոորդինատները՝

X=8457333.7840 Y=4519626.2290 Z= 0.0000
X=8457335.3435 Y=4519621.0590 Z= 0.0000
X=8457339.8127 Y=4519606.1127 Z= 0.0000
X=8457339.5240 Y=4519604.1806 Z= 0.0000
X=8457344.9896 Y=4519602.1873 Z= 0.0000
X=8457345.6634 Y=4519601.9680 Z= 0.0000
X=8457354.7355 Y=4519627.9909 Z= 0.0000
X=8457357.6360 Y=4519636.1832 Z= 0.0000
X=8457367.6684 Y=4519662.6513 Z= 0.0000
X=8457370.7884 Y=4519672.6249 Z= 0.0000
X=8457365.4438 Y=4519674.2968 Z= 0.0000
X=8457353.1191 Y=4519676.8827 Z= 0.0000
X=8457327.9115 Y=4519682.1917 Z= 0.0000
X=8457327.2624 Y=4519682.9752 Z= 0.0000
X=8457328.0777 Y=4519683.2033 Z= 0.0000
X=8457326.6590 Y=4519687.9777 Z= 0.0000
X=8457323.1252 Y=4519686.8609 Z= 0.0000
X=8457318.4372 Y=4519685.5947 Z= 0.0000
X=8457314.3329 Y=4519684.3211 Z= 0.0000
X=8457313.0655 Y=4519688.4776 Z= 0.0000
X=8457298.9619 Y=4519684.1587 Z= 0.0000

Հողատարածքի մակերեսը և կադաստրային ծածկագիրը ներկայացված են ստորև.

Աղյուսակ 2: Տեղամասի տվյալները



N	Բնակավայր	Կադաստրային ծածկագիր	Մակերես (հա)
1	Վանաձոր	06-001-0004-0009* 06-001-0429-0009	0.3846

Կապված Վանաձոր համայնքում իրականացված կադաստրայի ծածկագրերի փոփոխության հետ, սույն վկայականին այժմ համապատասխանում է **06-001-0429-0009** ծածկագիրը: Նախատեսված գործունեության տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները և մանրամասները ներկայացված են սույն հաշվետվության 6-րդ բաժնում (նախատեսվող գործունեության բնութագիրը):

Վանաձոր բնակավայրում դրամատիկական թատրոնի կառուցման նպատակային նշանակությունը.

Վանաձորում Հովհ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոնի նոր շենքի կառուցումը միտված է տարածաշրջանում մշակութային ենթակառուցվածքների վերագարգացմանը, հանրային մշակութային կյանքի ակտիվացմանը և թատերարվեստի ժամանակակից ու բազմաֆունկցիոնալ հարթակի ձևավորմանը: Նախագիծը նպատակ ունի ապահովելու թե՛ ճարտարապետապես գրավիչ, և թե՛ տեխնիկապես հագեցած ներկայացումների կազմակերպման պայմաններ՝ մշակույթի հասանելիությունն ու որակը բարձրացնելու համար:

Թատրոնի կառուցման հիմնական նպատակային ուղղություններն են՝

- **Մշակութային ծառայությունների հասանելիության ու որակի բարձրացում**՝ նոր թատրոնը կծառայի Վանաձոր քաղաքի և հարակից համայնքների բնակչությանը՝ դառնալով տեղային և տարածաշրջանային նշանակության մշակութային կենտրոն, որտեղ կմեկտեղվեն ներկայացումներ, կրթական և հանրային մշակութային միջոցառումներ:
- **Ժամանակակից թատերական միջավայրի ձևավորում**՝ շենքը կկահավորվի արդի բեմական տեխնիկայով, ձայնային և լուսային համակարգերով, ինչպես նաև հարմարեցված կլիմայի կրթական և ինտերակտիվ ծրագրերի անցկացման համար՝ ապահովելով բովանդակային և տեխնիկական բազմազանություն:
- **Մշակութային ներգրավվածության և համայնքային կյանքին մասնակցության խթանում**՝ թատրոնը կդառնա մշակութային ներառման և ստեղծարար նախաձեռնությունների հարթակ՝ հնարավորություններ ստեղծելով ինչպես դերասանների և արվեստագետների, այնպես էլ՝ երիտասարդների ու սովորողների համար:



- **Տարածքային ու տնտեսական ակտիվացման խթանում՝** շենքի կառուցումը և հետագա շահագործումը կնպաստեն նոր աշխատատեղերի ստեղծմանը (արվեստի, տեխնիկական և սպասարկման ոլորտներում), իսկ բարեկարգ միջավայրը կդառնա գրավիչ հանգստի և զբոսաշրջային տարածք քաղաքի կենտրոնում:

Թատրոնի տեղակայման տարածքը գտնվում է Վանաձորի կենտրոնական հատվածում՝ հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասում, որն արդեն ենթարկված է մարդածին ազդեցության: Ներկայումս տարածքում առկա են ապամոնտաժման ենթակա հին շինություններ, իսկ նոր կառուցապատումն իրականացվելու է ներկայիս ճակատային գծերի պահպանումով, տարածքի բարեկարգմամբ և կանաչապատմամբ:

Տարածքին մոտ կան բնակելի շենք-շինություններ, որոնց վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումներ, ներկայացված են սույն հաշվետվության ԲԿՊ-ում:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր):

Տարածքում չեն արձանագրվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

Տարածքի իրադրային սխեման, գլխավոր հատակագիծը և կադաստրային քարտեզը ներկայացված են ստորև.



Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման








Պատկեր 2: Գլխավոր հատակագիծ

ԳՂ.1


ՎԱՆԱԶՈՐԻ Գ. ՍԹԵԼԱՄԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԼՆՍԱԳԻԾ

ԳՂ.1



11
3




map 1:0.71

ԳՂ.1-1

հատված թաղանթից

Մ 1:0.71, 1:1

ԳՂ.1-1	Հ. ՍՏԵԼԱՄԻ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՆԱԶՈՐԻ Գ. ՍՏԵԼԱՄԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՆ
Լուծող/Մեծագույնը	ՍՏԵԼԱՄԻ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՆԱԶՈՐԻ Գ. ՍՏԵԼԱՄԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՆ
Կառվող/Կառուցող	ՍՏԵԼԱՄԻ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՆԱԶՈՐԻ Գ. ՍՏԵԼԱՄԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՆ
Վերականգնող/Վերականգնող	ՍՏԵԼԱՄԻ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՆԱԶՈՐԻ Գ. ՍՏԵԼԱՄԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՆ
Վերականգնող/Վերականգնող	ՍՏԵԼԱՄԻ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՆԱԶՈՐԻ Գ. ՍՏԵԼԱՄԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԿԱՌՈՒԹՅՈՒՆ



Պատկեր 3: Քարտեզ-սխեմա

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածը, որը կազմված է ալպիական լեռների ձևավորման գործընթացների արդյունքում առաջացած երիտասարդ ալիքավոր լեռնաշղթաներից, որը կոչվում է Փոքր Կովկաս, ինչպես նաև հյուսիս-արևելքում տեղակայված հրաբխային կազմավորման զանգվածներից, որոնք կազմում են Հայկական հրաբխային բարձրավանդակի մի մասը (Արագած, Արա, Հատիս և Գեղամա):

Հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում՝ Լոռու մարզում և գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1330մ բարձրության վրա (Վանաձոր բնակավայր):

Լոռու ֆիզիկաաշխարհագրական շրջանն ընդգրկում է Լոռու մարզը: Հս-ում եզրավորված է Վիրահայոց, արմ-ում՝ Ջավախքի, հվ-ում՝ Փամբակի, արևելքում՝ Գուգաց լ-շղթաներով: Բարձրությունները՝ 390 (Դեբեդի հովիտ)-3196 (Աչքասար լ.) մ է: Սահմանակից է Շիրակի, Տավուշի, Արարատի ֆիզիկաաշխարհագրական շրջաններին, հս-ում՝ Վրաստանին: Երկրաշարժաակտիվ գոտի է (1988-ի Սպիտակի



երկրաշարժի ուժգնությունը հասել է 10 բալլի):

Լեռնագրական խոշոր միավորներ են Լոռու դաշտը, Փամբակի գոգավորությունը և դրանք բաժանող Բագումի լեռնաշղթան, Լավար Լոռու ձորը (2544մ), Լեջան (2527մ) լ-գանգվածները, Լոռու ձորը՝ Դեբեդի (խոր.՝ մինչև 300մ) ու Գայլաձորի կիրճերով, և Ձորագետի կանիոնակերպ հովիտը: Սպիտակի լ-անցքով (բարձրություն՝ 2378մ) շրջանը կապվում է Արարատյան ֆիզիկաաշխարհագր. շրջանին, Պուշկինի լ-անցքով (բարձրություն՝ 2038մ) Լոռու դաշտը՝ Փամբակի գոգավորությամբ:

Կան բազմամետաղների, պղնձի, կաոլինային ապարների, շինանյութերի, բարիտի, գիպսի, կրաքարի, հանք, և արտեզյան ջրերի (Լոռու արտեզյան ավազան) պաշարներ:

Շրջանում հերթափոխվում են չոր տափաստանային, լեռնա-տափաստանային, լեռնա-անտառային և լեռնա-մարգագետնային, մերձալպյան և ալպյան վերընթաց լանդշաֆտային գոտիները:

Կապված խոնավության քանակից և ջերմային պայմաններից՝ այստեղ գերակշռում են տափաստանային լանդշաֆտների լեռնային տարբերակները: Տեղանքի բարձրության և խոնավության ավելացմանը զուգընթաց, տափաստանային լանդշաֆտները տեղի են տալիս ալպյան մարգագետիններին: Լեռնային ռելիեֆի շնորհիվ տափաստանային գոտու բնական պայմանները բազմազան են, ուստի այստեղ ձևավորվում են չոր լեռնա-տափաստանային և լեռնա-տափաստանային լանդշաֆտները:

Չոր լեռնա-տափաստանային լանդշաֆտները մարզի տարածքում զբաղեցնում են նախալեռնային գոտու 1450-1600մ բարձրությունների սահմանները: Այս լանդշաֆտների ձևավորումը կապված է ջերմության առատության և խոնավության որոշակի պակասի հետ: Այստեղ չորության գործակիցը 2.0-2.5 է: Արեգակի ուղիղ ճառագայթման առավելագույն լարվածությունը ընկնում հասնում է մինչև 1.6կալ/սմ²: Ճառագայթման տարեկան հաշվեկշիռը դրական է: Այստեղ տարածված են լեռնաշագանակագույն հողերը: Լեռնային տափաստաններում տեղումների քանակը զգալիորեն աճում է՝ կազմելով մոտ 600-700մմ, չորության գործակիցը փոքրանում է և դառնում 1.0-1.5: Բուսականությունը ավելի հարուստ է տեսակային կազմով:

Պատկեր 4: Գործունեության տարածքի ռելիեֆը



ՏԻՊԵՐ

Միջինլեռնային գոտի (1 500-2 800 մ)

- Ջառիթափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
- Անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված
- Հափավոր զառիթափ-գոգավոր լանջերով, մասնատված հովտաձորակային ցանցով
- Ուռուցիկ լանջերով գմբեթաձև լեռնազանգվածներ՝ մասնատված հովտաձորակային ցանցով
- Մեղմաբեր, բարձունքներ՝ ձորակներով թույլ մասնատված

Յաճրկեռնային գոտի (մինչև 1 500 մ)

- Մեղմաբեր, մասամբ ժայռոտ լանջերով, մասնատված V-աձև, երբեմն արկղաձև հովիտներով
- Խիստ մասնատված, հաճախ անհամաչափ լանջերով (կուեստներ) լեռկուտներ (Bad lands)

Վահանաչև բարձրադիր լեռներ (2 800 մ և բարձր)

- Թույլ մասնատված, մեղմաբեր աստիճանակերպ լանջեր
- Աստիճանակերպ լանջեր, մասնատված U-աձև հովիտներով
- Մեղմաբեր, բլրավետ լանջեր, մասնատված V-աձև հովիտներով

Մարահարթեր և սարավանդներ

- Մերձգագաթային, հորիզոնականին մոտ, թույլ թեք մասամբ բլրավետ
- Ալիքավոր-բլրավետ, թույլ մասնատված

Լեռնային հարթություններ

Միջին բարձրություն (1 500-2 500 մ)

- ա) հորիզոնականին մոտ
- բ) թեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2 500 մ)
- Հորիզոնականին մոտ, մասամբ դարավանդավորված, թույլ ալիքավոր (1 500-2 500 մ)

- Նախալեռնային շլեյֆ՝ ա) 2 100-2 300 մ, բ) մինչև 1 500 մ
- Թեք, դարավանդավորված (1 200-2 100 մ)

Յաճրադիր (մինչև 1 500 մ)

- Թեք, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500 մ)
- Նախալեռնային, հորիզոնականին մոտ (250-800 մ)
- Ալիքավոր, դարավանդավորված
- Դարավանդավորված, մասամբ մասնատված ձորակներով




5.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումները, ներկայացված ավազակավերով, խճա-մանրախճային գրունտներով:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը վերևից ներքև ներկայացված է հետևյալ շերտերով.

- **Շերտ 1՝** Թափվածքային գրունտ, հզորությամբ 3,0-4,0 մետր
- **Շերտ 2՝** Ավազակավեր, շականակագույն, խոնավ, տեղ-տեղ բաց շականակագույն, ձիգ-պլաստիկ, կիսակոշտ կոնսիստենցիա: Այն չունի համատարած տարածում: Հզորությունը 1,1-1,5մետր:
 - **Շերտ 2ա՝** Ավազակավեր, շականակագույն, տեղ-տեղ բաց շականակագույն, ջրահագեցած, փափուկ-պլաստիկ, հոսուն -պլաստիկ, կոնսիստենցիա: Այն չունի համատարած տարածում: Հզորությունը 3,0մետր:
- **Շերտ 3՝** Խիճ, մանրախիճ, կավավազային լցոնով, 30-40%, սակավ-խոնավ, այն չունի համատարած տարածում, բացված հզորությունը 1,5-1,9:


Պատկեր 5: Երկրկենդի հիմնական խորքային բեկվածքները



Պատկեր 6: ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական
վիճակագրական վարժության կայքից: $a=0.2g$, մինչև 3 բալ, $a=0.3g$, 3-ից 9 բալ, $a=0.4g$, 9 և ավելի բալ,
 $a=0.5g$, կործանարար երկրաշարժ/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՑՍՄԻԿ ԵՐԶԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ
SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA



Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ $a=500$ սմ/վրկ², $A=0.5g$:

Պատկեր 7: Սեյսմիկ գոտիների քարտեզ



5.3. Հիդրոերկրաբանություն

Ուսումնասիրվող տեղամասում իրականացվել են ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ: Ինժեներաերկրաբանական պայմանների վերաբերյալ եզրակացության կազմելու նպատակով իրականացվել է տարածքի տեղանքի տեղագնություն, հիմք է ընդունվել 6,0-7,0 մետր փորված չորս հորատանցքերի, տվյալները: Կատարվել է նմուշարկում, վերցվել են փորձանմուշներ, որոնց համար ուսումնասիրվել են գրունտների գեոտեխնիկական հատկությունների ուսումնասիրություններ:

Տեղամասում ստորգետնյա ջրերը բացահայտվել են 2,0-3,30 մետր խորության վրա, փորված հորատանցներով: Ջրերը տեխնաձին են, կապված են կոմունիկացիոն ջրերի արտաթողումների հետ:

Ուսումնասիրվող տարածքում բացակայում են ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:



5.4. Կլիմա և օդային ավազան

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Ընդհանուր առմամբ Ծրագրի համար հայցվող տարածքը գտնվում է նախալեռնային կլիմայական շրջանում, որտեղ. Ամառ՝ տաք, խոնավ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16-20°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 45-60%, բարենպաստ քամիներ, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմեռ՝ չափավոր ցուրտ, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հունվարին 0-5°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 50-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ներկայացված Ծրագրի իրականացման ամենմոտ օդերևութաբանական ցուցանիշները վերլուծելով, կարելի է նշել, որ դիտարկվել է 37.0 °C օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճան և -29.8 °C բացարձակ նվազագույն ջերմաստիճան, ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 56% և ամենաշոգ ամսվանը՝ 59%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 567մմ, իսկ տարվա մեջ միջին ձնածածկ օրերի քանակը՝ 79: Առանց արևի օրերի քանակը կազմում է տարեկան 51օր (2031ժ.):

Կլիմայի և օդային ավազանի մասին տեղեկատվական ցուցանիշները վերցված են Ծրագրի համար հայցվող տարածքին ամենամոտը գտնվող «Վանաձոր» օդերևութաբանական դիտակետից:

Աղյուսակ 3: Օդի միջին ջերմաստիճանը, °C



Բնակավայրի անվանումը	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
Վանաձոր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	8,3	-29,8	37,0
	-2,5	-1,7	2,6	8,0	12,3	15,8	18,7	18,4	14,9	9,5	4,0	-0,3			

Աղյուսակ 4: Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Վանաձոր	69	70	69	69	72	73	74	72	73	74	72	71	71	56	59

Աղյուսակ 5: Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												
	ըստ ամիսների												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII	
Վանաձոր	18	25	39	65	96	91	58	42	36	46	32	19	567
	27	26	47	36	35	61	42	38	29	30	31	19	61

Աղյուսակ 6: Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը
1	2	3	4	5
Վանաձոր	24	60	62	74



Աղյուսակ 7: Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (եմբա)	Ամիսներ	Կրկնակիությունը, % պարունակությունների Միջին արժեքները, մ/վ								Անհոդությունների կրկնակիությունը, %	Միջին ամսական առատություն, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (☐ 15 մ/վ ☐ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը , մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում		
			Հյուսիս արևելք (ՀԱ)	Հյուսիս- արևելք (ՀԱԱ)	Արև փեղա ե (ԱՐ)	Հարավ- արև փեղա (ՀԱԱ)	Հարավ (ՀԱ)	Հարավ- արև մույան (ՀԱԱ)	Արև մույան (ԱՐ)	Հյուսիս- արև մույան (ՀԱԱ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Վանաձոր	862,4	Հունվար	4	3	10	7	4	13	49	10	20	3.1	2,1	15	25	26	28
			1,5	1,7	1,5	2,0	2,2	3,8	4,0	2,4							
		Ապրիլ	7	7	23	12	5	9	27	10	23	2,3					
			1,5	1,9	1,6	2,2	1,3	2,7	2,3	1,2							
		Հուլիս	10	17	43	21	2	1	3	3	22	1,9					
			1,9	1,9	1,8	2,1	1,6	1,8	1,7	1,5							
		հոկտեմբեր	6	9	28	18	4	5	20	10	37	1,6					
			1,3	1,3	1,3	1,7	1,4	1,8	1,9	1,3							

Աղյուսակ 8: Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1	2	3	4
Վանաձոր	11 դեկտեմբեր	27 փետրվար	79

Աղյուսակ 9: Արևափայլի տևողություն (ժ) և առնաց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Արևափայլի տրոհությունը և առանց արևի օրերի քանակը												
	Տևողությունը	ըստ ամիսների											
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	X I	XII
Վանաձոր	ժ	140	145	158	150	195	218	197	197	193	167	145	126
	օր	5	5	6	5	3	2	4	4	3	4	4	6

5.5. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման: Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից դիտակետերի միջոցով:



Ըստ ՊՈԱԿ 2024 թվական ամփոփագրի Վանաձոր քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 3 դիտակայան:

2024 թվականի ընթացքում քաղաքի փոշու օրական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.1-6.4 անգամ (196 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (959 մկգ/մ^3) դիտվել է մարտի 5-ին՝ Դիմաց թաղամասում: Նախորդ տարվա համեմատությամբ փոշու կոնցենտրացիան աճել է 2%-ով:

Քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 վնասակար նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 0.94 է (փոշի՝ 0.85, ծծմբի երկօքսիդ՝ 0.04, ազոտի երկօքսիդ՝ 0.05):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների նվազման տենդենց:

Աղյուսակ 10: Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված վնասակար նյութերի միջին տարեկան կոնցենտրացիան 2020-2024թթ.

Վնասակար նյութի անվանում	Տարեթիվ					Տենդենց
	2020	2021	2022	2023	2024	
Փոշի, մկգ/մ^3	217	164	154	126	128	-21.8
Ծծմբի երկօքսիդ, մկգ/մ^3	8	7	4	3	2	-1.7
Ազոտի երկօքսիդ, մկգ/մ^3	6	5	6	6	4	-0.3

Պատկեր 8: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Ընկալիչ	Ժամերը	Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը	
		dBL _{Aeq}	dBL _{AMax}
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	07:00-23:00	55	70
	23:00-07:00	45	60

Աղյուսակ 12: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով



Աշխատանքային գործընթացի լարվածության կարգ	Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ				
	Թեթև ֆիզիկական ծանրաբեռն- վածություն	միջին ֆիզիկական ծանրաբեռն- վածություն	1 աստիճանի ծանր աշխատանքի	2 աստիճանի ծանր աշխատանքի	3 աստիճանի ծանր աշխատանքի
Թեթև աստիճանի լարվածություն	80	80	75	75	75
Միջին աստիճանի լարվածություն	70	70	65	65	65
Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն	60	60			
Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն	50	50			

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները (հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է բնակավայրի կենտրոնական մասում, որտեղ առկա են մի քանի ճանապարհներ): Ելակետային իրավիճակում դրամատիկական թատրոնի համար հայցվող տարածքում աղմուկի մակարդակը միջինից-բարձր է, քանի որ տեղանքը բավականին խիտ բնակեցված է: Գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին են: Աղմուկը որոշակիորեն կավելանա նաև գործունեության իրականացման ընթացքում պայմանավորված շինարարական աշխատանքների բնույթով, ինչը սակայան լինելու է ժամանակավոր և կառավարելի, իսկ զգալի բացասական ազդեցություններ չեն նախատեսվում:

5.7. Ջրային ռեսուրսներ

ՀՀ կառավարության կողմից “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին” որոշման (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) սահմանված է ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար: Տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»



ՊՈԱԿ-ը (հետագայում՝ ՊՈԱԿ):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական 40-65 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Լոռու մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով: Մարզի խմելու ջրի աղբյուրները ունեն բարձր որակական հատկանիշներ: Մարզի տարածքում հոսում են 1356 գետեր և գետակներ, որոնք օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով: Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրառատ լեռնային Դեբեդ գետը (154կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցնազետ Լ. և Փամբուկ վտակներով: Գետի ափին կառուցվել է «Ձորագետ հիդրո» ՀԷԿ-ը:

Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային աղբյուրներով: Մարզում առկա է մեկ ջրամբար (Մեծավանի ջրամբար) շուրջ 5 մլն/մ խորանարդ տարողությամբ:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ տարածքում մակերևութային ջրերի որակի 2024 թվականի ամփոփագրի՝ Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև, Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Սպիտակ քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր լուծված աղերով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով և ընդհանուր լուծված աղերով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում: Տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Փամբակ գետն է, որը գտնվում է ներկայացված տարածքից ավելի քան 750մ հեռավորության վրա (դեպի հյուսիս):



5.8. Հողային ռեսուրսներ

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251052.7հա (Մարզի տարածքի 66%), որից վարելահողերը՝ 42089.4հա (16.8%): Համաձայն Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 0844.0 հա, որից՝ վարելահող 41977.1 հա: Հողատարածքները կազմում են 9554 հա, որոնց ոռոգման աշխատանքները իրականացվում են 4 մեծ միջտնտեսային ջրանցքների՝ Նալբանդի մեծ ջրանցքի , Կիրովի Լոռու մայր, Մյրում-ճւճկան մայր ջրանցքների, ինչպես նաև այլ ներտնտեսային ոռոգման ցանցերի միջոցով:


Համաձայն ՀՀ-ում վերաբերյալ հողերի գնահատման ատլասի, ըստ հողային ծածկույթի գոտիականության, Լոռու մարզը մտնում է Հյուսիս-արևելյան գոտու մեջ, որտեղ 1300-2450մ բարձրությունների վրա գերակշռում են սևահողերը, անտառային գորշ հողերը:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (рН-ը տատանվում է 7-ի սահմաններում): Սևահողերում հումուսի պարունակությունը տատանվում է 6-8% սահմաններում:

Նախատեսվող գործունեության համար նախատեսված տարածքը պատկանում է (Վանաձոր բնակավայր) «սևահող կրազերծված խորքային կարբոնատային» հողային տիպին: Նստվածքների գենետիկական տիպը՝ ժամանակակից հունային, դարավանդային և արտաբերման կոների պրոյուվիալ և այլուվիալ-պրոյուվիալ, իսկ հողառաջացնող ապարների լիթոլոգիական կազմը՝ գլաքարախառնուրդ՝ մանրակոպիճով, տարահատիկ ավազով և կավավազով:

Հողերի էրոզվածության աստիճանը VI-րդ կարգի է՝ 70%-ից ավել:

Պատկեր 8. Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

7	Մարգագետնատափաստանային սևահողանման խճաքարային
12	Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած
13	Անտառային գորշ թույլ չհագեցած խճաքարային
18	Անտառային դարչնագույն կրաքերծված տափաստանացված
28	Սևահող կրաքերծված խորքային կարբոնատային
33	Սևահող ալրային կարբոնատային

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում չկա բերրի հողաշերտ, քանի որ այն նախկինում ամբողջապես կառուցապատված էր:

5.10. Բուսական և կենդանական աշխարհ

5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ

Տարածքը գտնվում է Վանաձոր քաղաքի կառուցապատված գոտում: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը գործնականում բացակայում են: Ստորև բերված է Վանաձոր բնակավայրի տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:



Կլիմայի և ռելիեֆի բազմազանության, բնապատմական զարգացման և ուրույն աշխարհագրական դիրքի շնորհիվ բազմազան է նաև Լոռու մարզի բուսականությունը: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Լոռու մարզը գտնվում է տարբեր բուսաաշխարհագրական մարզերի շփման վայրում: Ըստ Ա. Լ. Թախտաջանի՝ ՀՀ տարածքի հյուսիսային հատվածն ընկած է Կովկասյան բուսաաշխարհագրական մարզի տարածքում, որտեղ բնորոշ են բուսականության մեզոֆիլ (խոնավասեր) տեսակները:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար:

Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (*Stipa pennata* L.), սեզ սողացող (*Elytridia repens* L.), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis* L.), շյուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis* Huds.), կծմախոտ (*Bothriochloa ischaemum* L.), իսկ խոնավ տեղերում՝ երիցուկ (*Tanacetum*): Չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազասեղնային (*Astragalus picnophyllus* Stev.) և զանազան թփերը, մացառները: Տափաստանային բուսականության առանձին տիպ են կազմում հացազգի բույսերը: Բավականաչափ տարածված են փշոտ գազաթփերը, որոնցից տեղ-տեղ ձևավորվում են տափաստանները: Դրանք բնորոշ են հատկապես Փամբակի լեռներին:

Լոռու մարզում ֆիզիկաաշխարհագրական պայմանների բազմազանության շնորհիվ առանձնացվում են տափաստանների հետևյալ ենթաշրջանները՝ Լոռու, Զավախքի, Վիրահայոց լեռների, Փամբակ-Դեբեդի, հովտասարավանդային և Բազում-Փամբակի: Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի լեռնաշղթաների (Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց) զառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը:

Մարգագետնատափաստանային բուսականությունը տարածվում է 2300մ-ից վեր, համեմատաբար խոնավ վայրերում, որի շնորհիվ հարուստ է փարթամ և հյութեղ խոտերով: Այն բաժանվում է երկու ենթագոտու՝ ստորին կամ մերձալպյան և վերին կամ ալպյան: Մերձալպյան մարգագետինները միջանցիկ դեր են կատարում և կազմված են բարձր խոտերից: Այս ենթագոտին զբաղեցնում է 2800-2900մ բարձրությունները

Մերձալպյան գոտում տարածվում են ցորնազգիները, լոբազգիները և տարախոտերի այլ տեսակներ՝ ցորնուկ, դաշտավլուկ, հոտավետ հասկիկ, ինչպես նաև երեքնուկ, խատուտիկ, մեխակ և այլն: Լոռու մարզի անտառները հարուստ են ծառատեսակներով (մոտ 60 տեսակի ծառ, 90 տեսակից ավելի թուփ): Անտառի



հիմնական ծառատեսակը հաճարենի արևելյանն (*Fagus orientalis* Lipsky) է, որը խոնավության և հողի նկատմամբ բավական պահանջկոտ ծառատեսակ է: Այն չի սիրում օդի ոչ շատ բարձր ջերմաստիճանները և ոչ էլ շատ խիստ ցրտի պայմանները: Հաճարենու հետ աճում են կաղնի արևելյան (*Quercus macranthers* Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացական (*Q. iberica* Stev.), թխկի վրացական (*Acer ibericum* M. Bieb.), լոբենի կովկասյան (*Tilia caucasica*), բոխի սովորական (*Carpinus betulus* L.) և այլն: Կաղնին երբեմն կազմում է ինքնուրույն անտառ: Այստեղ տարածված է կաղնու երկու տեսակ՝ լեռնային կամ արևելյան և վրացական: Կաղնին համեմատաբար ցրտադիմացկուն և չորադիմացկուն է, ունի ամուր բնափայտ, երկարակյաց է, տալիս է բարձր որակի բնափայտ: Բուն ալպյան բուսականությունը տարածվում է 2800-2900մ-ից վեր: Այն ծածկված է խոշոր, վառ գույնի ծաղիկներով, որոնք հաճախ այնքան խիտ են և բազմերանգ, որ նմանվում են գորգերի՝ կոչվելով «ալպյան գորգեր»: Ալպյան և մերձալպյան մարգագետնատափաստանային բուսականությունն իր սննդարար ու հարուստ խոտածածկությամբ կարևոր նշանակություն ունի մարզի անասնապահության զարգացման համար: Սակայն մարդու տնտեսական գործունեության շնորհիվ մարզի բուսածածկությամբ զգալիորեն տուժել է:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից Լոռու մարզում գրանցված են 54 տեսակ, որից անողնաշարավոր կենդանիներ՝ 7, ողնաշարավոր կենդանիներ՝ 47: Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Ստեփանավանյանսն լսովակային գնալուկ (*Duvalius stepanavanensis* Khnzorian), Մթնաշաղային կապտաթիթեռ (*Maculinea nausithous*), թռչուններից՝ Գառնանգղ (Մորուքավոր անգղ / *Gypaetus barbatus*), Գիշանգղ (*Neophron percnopterus*), Սպիտակագլուխ անգղ (*Gyps fulvus*), Փոքր ենթարծիվ (*Aquila pomarina*), Վայրի հնդկահավ (Ուլար) (*Tetraogallus caspius*), Մոխրագույն կռունկ (*Grus grus*), Ներկարար (*Coracias garrulus*), Կովկասյան մարեհավ (*Tetrao mlokosiewiczi*), Տարգալակտուց (*Platalea leucordia* Linnaeus), կաթնասուններից՝ Շելկովնիկովի կուտորա (*Neomys schelkovnikovi* Sat.), Գորշ արջ (*Ursus arctos* Linnaeus), Անտառակատու (*Felis silvestris* Schreber), Փոքրասիական գետնասկյուռ (*Spermophilus xanthoprymnus* Bennet) և այլն: Էնդեմիկ տեսակ է հայկական ծղրիդ (*Montana armeniaca* Rme), սողուններից՝ Դալի մողես (*Darevskia dahli*), Սպիտակ խխունջ (*Gyraulius albus*), Փոքրասիական մողես (*Parvilacertaparva* Boulenger), Սպիտակափոր մողես (*Darevskia unisexualis*), Հայկական լեռնատափաստանային իծ (*Vipera (Pelias) eriwanensi*) և այլն: Լոռու սարահարթի լճակներում հանդիպում է մոխրագույն սուզակ, որը քիչ տարածված և կրճատվող տեսակ է:

Պետք է հաշվի առնել, որ ուսումնասիրվող և հարակից տարածքները մարդու գործունեության արդյունքում բավականաչափ յուրացված են, բացակայում են ինչպես զգալուն էկոհամակարգերը, այնպես էլ բույսերի և կենդանիների հազվագյուտ և



Կարմիր գրքային տեսակները, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումների նախատեսման անհրաժեշտությունը բացակայում է:


5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը չի ընկնում որևէ բնության հատուկ պահպանվող տարածքում, ինչպես նաև տարածքի հարևանությամբ չկան ԲՀՊՏ-ներ: Ներկայացված Ծրագրի իրականացման տարածքին ամենամոտը «Կովկասյան մրտավարդենու» պետական արգելավայրը, որը սակայն նշված տարածքից գտնվում է գտնվում է ավելի քան 4 կմ հեռավորության վրա:

Ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում ազդեցություն որևէ ԲՀՊՏ-ի վրա չի նախատեսվում, քանի որ գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է մոտկա ԲՀՊՏ-ից ավելի քան 4կմ հեռավորության վրա:

5.12. Պատմամշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 9 փետրվարի 2004 թվականի N 49-Ն որոշման՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Վանաձոր քաղաքում կան բազում պատմամշակութային հուշարձաններ, որոնից մեկը՝ Հ. Աբեյանի հուշարձանը (1965թ., քանդ.՝ Մ. Մինասյան) գտնվում է Ծրագրի իրականացման տարածքի հարևանությամբ: Չնայած, որ ներկայացված հուշարձանը գտնվում է տարածքին մոտ (պատկերը ներկայացված է ստորև), Ծրագրի իրականացման շրջանակներում որևէ բացասական ազդեցություն չի նախատեսվում: Հնարավոր ազդեցությունների բացառման նպատակով սույն հաշվետվության ԲԿՊ-ում առաջարկվել են համապատասխան միջոցառումներ:





Բնապատմական

Առկա չեն:

Կենսաբանական՝

«Սրտավարդ կովկասյան»	Լոռու մարզ, Պուշկինի լեռնանցք
----------------------	-------------------------------

Նշված բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում և չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում:

5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ

Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է Լոռու մարզում:

Լոռու մարզ

Տարածքը՝ 3779 կմ²;

Համայնքներ, 2024թ. տարեսկզբի դրությամբ՝ 11

(https://armstat.am/file/Map/MARZ_06.pdf):

Քաղաքները՝ 8:

Գյուղեր՝ 120;

Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ՝ 226,3 հազ. մարդ:

Այդ թվում՝ քաղաքային – 126,9 հազ. մարդ;

գյուղական – 99,4 հազ. մարդ:

Լոռու մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսում: Այն հյուսիսից պետական սահմանով սահմանակից է Վրաստանին, արևելքից՝ Տավուշի մարզին, հարավից՝ Արագածոտնի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերին, իսկ արևմուտքից՝ Շիրակի մարզին: Լոռու մարզը ՀՀ ամենաշատ քաղաքներ ունեցող մարզն է:

2023թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 3.8 %,
- գյուղատնտեսություն 8.9 %,
- շինարարություն 4.2 %,
- մանրածախ առևտուր 2.3 %,
- ծառայություններ 1.1 %:

Մարզի տնտեսության առաջատար ոլորտները գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Լոռու մարզում զարգացած է նաև զբոսաշրջությունը:



Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղություններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

Լոռու մարզում է գտնվում ՀՀ ամենաերկար ավտոտրանսպորտային թունելը, որն անցնում է Բազումի լեռնաշղթայի տակով և Ստեփանավան-Վանաձոր հիմնական ավտոերթուղու մաս է կազմում: Մարզում է գտնվում Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսակետը: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզկենտրոն Վանաձոր քաղաքը (2024թ. տարեսկզբին՝ 77.1 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բազում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1 350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը: Մարզկենտրոն Վանաձորը բնակչության թվաքանակով և արտադրական ներուժով ՀՀ երրորդ քաղաքն է: Քաղաքում գործում են մանր ու միջին արտադրական այլ կազմակերպություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

Աղյուսակ 12: Լոռու մարզի հիմնական վիճակագրական տվյալները, 2019-2023թթ

	2019	2020	2021	2022	2023
Մարզի մշտական բնակչության թվաքանակը հունվարի 1-ի դրությամբ, 1 000 մարդ	213.3	212.6	211.7	222.8	226.3
այդ թվում՝ քաղաքային	126.1	125.4	124.5	124.2	126.9
գյուղական	87.2	87.2	87.2	98.6	99.4
Բնական աճի գործակիցը, 1 000 բնակչի հաշվով	-0.1	-2.7	-3.1	0.3	1.9
Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ	229 581.6	212 872.2	278 898.8	242 605.8	...



Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	87 222.8	110 447.2	152 824.0	90 431.0	108 631.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	68.5	67.2	78.6	88.6	84.3
Շինարարության ծավալը, ընթացիկ գներով մլն. դրամ	14 269.4	16 680.0	21 298.3	24 915.2	28 663.9
Ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ	4.7	10.0	13.7	5.9	6.7
Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ	81.7	29.8	33.9	39.5	30.0
Կապի ծառայությունների հասույթը, ընթացիկ գներով, մլն. դրամ	1 401.2	1 907.3	1 486.3	1 373.6	1 233.4
Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	44 505.9	33 478.7	39 346.0	41 486.0	44 576.4
Ծառայությունների ծավալը, մլն. Դրամ	23 711.9	21 015.1	23 696.6	30 911.2	32 534.0
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	100.2	101.0	106.5	108.2	101.0
Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, %	95.0	98.7	108.4	119.3	93.4
Աշխատանքային ռեսուրսները, 1 000 մարդ	208.7	213.3	209.3	160.1	165.7
որից՝ զբաղվածներ	80.4	90.9	96.0	71.0	75.4
գործազուրկներ	20.0	23.5	22.2	16.9	15.5
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	124 293	129 807	139 825	137 452	151 780
Առևտրային կազմակերպությունների	75 477.5	93 508.3	104 021.8	94 784.8	115 154.8



արտադրանքի, ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը, մլն.դրամ					
Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը	41	40	40	40	39
Գրանցված հանցագործությունների քանակը	1 578	1 797	1 974	2 613	2 672
Կենսաթոշակառուների թվաքանակը տարեվերջին, մարդ	43 321	43 134	42 534	42 444	42 646
Նպաստառու ընտանիքների քանակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ	12 934	12 937	12 429	10 975	10 514
Նախադպրոցական հաստատությունների քանակը	95	95	98	97	97
Հանրակրթական դպրոցների քանակը	163	163	163	163	162
Պետական մասնագիտացված թատրոնների քանակը	3	3	3	3	3
Գործող թանգարանների քանակը	8	8	8	8	8
Գրադարանների քանակը	47	44	44	44	41
Մարզական կազմակերպությունների քանակը	19	19	21	21	21

Վանաձոր համայնք/բնակավայր

Տաշիր-Չորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով («Թագավորանիստ», «Մաշտոցի բլուր», «Քոսի ճոթեր»), բրոնզե դարի և վաղ երկաթի դարաշրջանի (մ.թ.ա. III հազարամյակ) դամբարաններով: Այստեղ ծաղկում է ապրել խեցեգործությունը, զարգացել է մետաղագործությունը: Բնակավայրի մասին միջնադարից մեզ հասած շատ տեղեկություններ չեն պահպանվել: Միակ հետքը Վանաձորի կիրճում գտնվող Պապանի գյուղն է:



Գուգարքի հետ միասին՝ Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Մեծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորություն կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը թաթարական է, տրվել է XIII դարի սկզբներին Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունով:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին է անցնում նաև Լոռին, և Ղարաքիլիսան դառնում է սահմանային գորակայան: 1849թ. Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր: 1870թ. Դիլիջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899թ. Թիֆլիս-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկաթուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը նպաստեց գյուղաքաղաքի ձևավորմանն ու զարգացմանը:

1812թ. Եվրոպացի ճանապարհորդներ Ջեյմս Մորիերը և Ռոբերտ Հերփորթը տեսել են փայտե, հողածածկ տներով մի խղճուկ գյուղակ: Իսկ 1829թ. Ղարաքիլիսա եկած Խաչատուր Աբովյանը վկայում է, որ այստեղ հազիվ 500-600 բնակիչ կար, որոնք գաղթել էին Երևանից: Հետագայում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, Ղարաքիլիսայում բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանի Կարս, Արդահան, Բայազետ, Էրզրում քաղաքներից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիքներ:

Նախախորհրդային շրջանում այստեղ գործել են եկեղեցական, ծխական (հիմնվել է 1853թվականին), օրիորդաց (1879), պետական երկդասյա ռուսական (1897) և ռուս պաշտոնյաների երեխաների (1908) դպրոցներ:

Վանաձորը քաղաքային բնակավայր է 1924թվականից: 1929-1930թվականներին կազմվել է Ղարաքիլիսայի (հետագայում՝ Կիրովական, այնուհետև Վանաձոր) առաջին հատակագիծը (ճարտարապետներ՝ Կարո Հալաբյան, Միքայել Մազմանյան, Գևորգ Քոչար), որով նախատեսում էր քաղաքի տարածքն ընդլայնել արևմտյան և արևելյան ուղղություններով՝ Դիմաց թաղամասում: Մինչև 1935թ. կոչվել է Ղարաքիլիսա: 1935թ. հունվարին Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է հեղափոխական Սերգեյ Միրոնովիչ Կիրովի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքը վերանվանել Կիրովական: 1939թ. գլխավոր հատակագծով (ճարտարապետներ՝ Ն. Զարգարյան, Ա. Մինասյան) որոշակի է դարձել քաղաքի կերպարը՝ զարգացման նշանակալից հեռանկարներով (արդյունաբերական կենտրոն և ամառանոցային վայր): 1949թ. կազմվել է նոր գլխավոր հատակագիծ (ճարտարապետներ՝ Հ. Դավթյան, Ռ. Գրիգորյան): 1950-ական թվականներին կառուցապատվել է Կիրովի անվան (այժմ՝ Հայքի) հրապարակը՝ քաղաքի վարչակառավարչական կենտրոնը:

19-րդ դարում քաղաքում եղել է երկու եկեղեցի՝ կառուցված 1831թվականին



(1828թ. երկրաշարժից քանդված հին եկեղեցու տեղում) և 1895թ. (ռուսական եկեղեցին): 1978թ. քաղաքում գործել են արդյունաբերական 27 ձեռնարկություններ: Այդ ժամանակաշրջանի արդյունաբերության առաջատարը Ալեքսանդր Մյասնիկյանի անվան քիմիական գործարանն էր: Ժամանակին քաղաքի խոշոր ձեռնարկություններից են եղել քիմիական մանրաթելերի, ճշգրիտ հաստոցների, «Ավտոգենմաշ», «Ավտոմատիկա» գործարանները, տրիկոտաժի, կահույքի, կարի արտադրական միավորումները: «Պոլիմերսոսինձ» գիտաարտադրական միավորումն իր բնագավառի առաջատար գիտական կենտրոններից էր: Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մեծ համբավ են ունեցել այն ժամանակ Կիրովականի կահույքի, մորթու-մուշտակի, կարի ֆաբրիկաները, «Լոռի» հանքային ջրերի գործարանն ու թեթև արդյունաբերության այլ ձեռնարկություններ:

1992թ. քաղաքը կոչվում է Վանաձոր: Այն Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է (80000 բնակչություն՝ 2017թ., իսկ 1988թ.-ին՝ 178000), Լոռու մարզկենտրոնը:

Այսօր քաղաքը մեծամասամբ հաղթահարել է 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները և թևակոխել է զարգացման նոր փուլ: Այժմ քաղաքը զարգացման երկրորդ շունչն է առնում: Վանաձորում գործում են 6 բուհ, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, 10 մարզադպրոց, ընդհանուր առմամբ 19 մշակութային հիմնարկներ՝ երաժշտական դպրոցներ, արվեստի դպրոցներ, երգչախմբեր, մշակույթի տներ, թատրոններ, թեթև արդյունաբերական ձեռնարկություններ և այլն:

Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599,33հեկտար մակերես՝ Փամբակի և Բազումի լեռների հովտում:

Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 120կմ է, երկաթգծով՝ 224կմ: Ծովի մակերևույթից բարձր է 1353մ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, տրանսպորտային հանգույց՝ այստեղով են անցնում Երևան-Թբիլիսի երկաթգիծը, ինչպես նաև միջպետական կարևորագույն ավտոճանապարհներ:

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող թատրոնի շենքը կառուցվելու է սեփականության իրավունքով Վանաձորի Հովհ. Աբելայնի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ին պատկանող հողամասում, որը գտնվում է ՀՀ լոռու մարզի Վանաձոր համայնքի



վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.3846 հա (սեփականության վկայականը ներկայացված է Հավելված 2-ում): Թատրոնի ճարտարապետական կերպարը ձևավորված է ժամանակակից ուղղությամբ՝ ընդգծված ճակատային կառուցվածքով, շեշտված բեմի ծավալով, բաց մուտքային տարածքներով և ընդարձակ ֆոյեով: Ընդհանուր ծավալը բաղկացած է մի քանի բլոկներից՝ հանդիսատեսի դահլիճ, բեմ և բեմի հետևի տեխնիկական գոտի, ադմինիստրատիվ և օժանդակ տարածքներ, ինչպես նաև արտիստների սենյակներ ու վերելակային հաղորդակցում: Շենքի հատակագծային կազմակերպումն ունի համաչափ և հստակ բաժանում՝ ըստ ֆունկցիոնալ գոտիների՝ ելնելով տրոֆիկայի, հոսքերի տարանջատման և անվտանգության պահանջներից:

Թատրոնի տեղակայման տարածքը գտնվում է Վանաձորի կենտրոնական հատվածում՝ հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասում, որն արդեն ենթարկված է մարդածին ազդեցության: Ներկայումս տարածքում առկա են ապամոնտաժման ենթակա հին շինություններ, իսկ նոր կառուցապատումն իրականացվելու է ներկայիս ճակատային գծերի պահպանումով, տարածքի բարեկարգմամբ և կանաչապատմամբ:

Տարածքին մոտ կան բնակելի շենք-շինություններ, որոնց վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումներ, ներկայացված են սույն հաշվետվության ԲԿՊ-ում:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր):

Տարածքում չեն արձանագրվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Թատրոնի ճարտարապետական կերպարը ձևավորված է ժամանակակից ուղղությամբ՝ ընդգծված ճակատային կառուցվածքով, շեշտված բեմի ծավալով, բաց մուտքային տարածքներով և ընդարձակ ֆոյեով: Ընդհանուր ծավալը բաղկացած է մի քանի բլոկներից՝ հանդիսատեսի դահլիճ, բեմ և բեմի հետևի տեխնիկական գոտի, ադմինիստրատիվ և օժանդակ տարածքներ, ինչպես նաև արտիստների սենյակներ ու վերելակային հաղորդակցում: Շենքի հատակագծային կազմակերպումն ունի համաչափ և հստակ բաժանում՝ ըստ ֆունկցիոնալ գոտիների՝ ելնելով տրոֆիկայի, հոսքերի տարանջատման և անվտանգության պահանջներից:

Դահլիճը նախատեսված է մոտավորապես 400 հանդիսատեսի համար, ապահովված է հաշմանդամ անձանց հասանելիությամբ՝ ըստ ՀՀՇՆ 2.05.02-2006



նորմերի: Նստատեղերի դասավորվածությունն ու պատերի ձայնամեկուսիչ հարդարումը մշակված են ակուստիկ մասնագետների խորհրդով՝ ապահովելով բարձրակարգ լսողական պայմաններ՝ խոսքի, երգի և նվագախմբի ելույթների համար: Բեմը նախագծված է բազմաշերտ՝ պրոֆեսիոնալ թատերական գործունեության համար, պարունակում է բեմի վերին մասը՝ տեխնիկական լարերի, լուսային զարդակի և ձայնային համակարգերի ամրացման համար: Բեմի ետնամասում նախատեսված են դեկորների պահեստներ՝ առնվազն 6 մ բարձրությամբ, լայնությամբ՝ հարմարեցված տարբեր ձևաչափի դեկորների կցորդման և տեղափոխման պահանջներին:

Շենքը երեքհարկանի է՝ ստորգետնյա հարկով, որտեղ տեղակայված են կենցաղային, ինժեներական և պահեստային տարածքներ: Յուրաքանչյուր հարկ ունի հստակ ֆունկցիոնալ կառուցվածք՝

- **Գետնահարկում՝** մուտքից նայելիս ձախ կողմի աստիճանները տանում են դեպի հանդիսատեսի համար նախատեսված ընդարձակ հանդերձարան, կոր պատով առնջատվում է հանդիսատեսի սանհանգույցների համար նախատեսված տարածքը, որը հակառակ կողմից սպասարկում է նաև թաքստոցին: Նկուղային հարկում նախատեսված է երկու նիշ, դեֆորմացիոն կարից այն կողմ դեպի շենքի ետնամաս նախատեսված է 5 և ավել մ բարձրություն, ընդարձակ պահեստների և պահեստներում գույքի մատչելի տեղաշարժի և պահմապնաման համար: Նախատեսված են սենյակներ պտտվող բեմի և բարձրացող իջնող բեմի համար մեխանիզի և դրանց սպասարկող սենյակներ, բարձր դեկորների տեղափոխումը նախատեսվում է իրականացնել պահեստում առկա բեռնատար վերելակով և բարձրացող իջնող բեմով, անիջապես դեկորը բարձրացվում է բեմ: Առկա են նաև տեխնիկական այլ սենյակներ ինժեներական ենթակառուցվածքների և ճիշտ միացումների համար:
- **Առաջին հարկում՝** մուտքային նախասրահ – ճեմասրահն է, կից տոմսարկղով և օժանդակ երկրորդային մուտքով, առաստաղը ունի կոր ընդարձակ բացվածք մինչև երկրորդ հարկի առաստաղ, երկու հարկի չափով: Երկու կողմից նկուղ իջնող աստիճաններով, դիմացից դեպի դահլիճ տանող աստիճաններով 1,2 մ բարձրությամբ, որը բաժանվում է այդ նիշում երկու մասի և կորությամբ բարձրանում է երկրորդ հարկի օթյակներ: Երկու կողմից միջանցները տանում են դեպի բեմի, և բեմին սպասարկող սենյակների գոտի, արդեն ոչ հասանելի հանդիսատեսի համար: Շենքի հետքի կողմից է նախատեսվում աշխատակիցների մուքը առանձին միջանցքով, երկու աստիճանավանդակներով կապված երկրորդ հարկի գրիմանոցների և երրորդ հարկի վարչական մասի սենյակներին: Բոլոր սենյակների կապերը մտածված է հաշվի է առնված



աշխատակիցների ազատ տեղաշարժի համար, աշատանքի անխոչընդոտ կազմակերպման համար: Դերասանների և աշխատակիցների հոսքերը չեն հատվում, առանձին միջանցքներով են:

- **Երկրորդ հարկում՝** նախատեսված է կոր բացվածքի երոկու անկյունային մասում ցուցասրահ, մուտքեր դեպի օթյակներ, երկու կողմի աստիճաններով բարձրանում է երրորդ հարկի 100 հանդիսատեսի համար նախատեսված դահլիճի նախասրահ և դահլիճ: Շենքի մյուս դեպի հետ հատվածում տեղակայված են գրիմանոցները, իրենց սանհանգույցներով և լվացարաններով որոք երկու աստիճանավանդակներով կապվում են առաջին հարկի բեմին սպասարկով բոլոր սենյաներ:
- **Երրորդ հարկում՝** նախատեսված է 100 հոգանոց դահլիճը, իր նախասրահով, նախասրահում հանդիսատեսի համար սանհանգույցներով, տերասայով, դերասանների անցման գոտիով: Նախատեսված են տնճրենի սենյակ ընդունարանով, արխիվով և հանգստի սենյակով, վարչական մասի աշխատակիցների սենյակները, փորձասենյակներ, հագուստի հանդերձարան, սանհանգույցներ աշխատակիցների համար, դեպի բեմի վերին հատված մետաղական կարկասով անցուղիների մուտք դարպասներով:
- **Տանիքում/վերնահարկում՝** օդափոխիչների և ինժեներական հանգույցների տեխնիկական գոտի

Թատրոնի շենքը նախագծվել է հաշվի առնելով բոլոր շենքաֆիզիկական գործոնները՝ ջերմամեկուսացում, ձայնամեկուսացում, բնական լուսավորություն, օդափոխություն և էներգաարդյունավետություն: Օդափոխման համակարգը համակցված է՝ բնական օդափոխությունը լրացվում է մեխանիկական շարժիչներով՝ ապահովելով անհրաժեշտ օդափոխման ծավալ թե՛ դահլիճում, թե՛ փակ տարածքներում: Ջեռուցումը կատարվում է սեփական կաթսայատնից, նախագծված է բացարձակապես անվտանգ՝ արտանետումների հսկողությամբ և պահեստային տարբերակով:

Շենքը հարմարեցված է բոլոր օգտվողների խմբերի համար՝ հաշմանդամություն ունեցող անձանց շարժման ուղիներ, հարթակներ, հատուկ սանհանգույցներ, ինչպես նաև տեսողության և լսողության խանգարումներ ունեցողների հասանելիություն: Բացի դրանից, ներառված է նաև երեխաների համար նախատեսված հատուկ գործունեության փոքր սրահ, որը կարող է ծառայել նաև կրթական ծրագրերի իրականացման նպատակով:

Ճարտարապետական կերպարը արտահայտված է պարզ և համարձակ ծավալային լուծումներով: Ֆասադում օգտագործված է երանգային բարդ գամմա՝ տաք



քարե երանգներ, որոնց համադրված են մետաղական մոխրագույն էլեմենտներով տարրեր՝ ընդգծելով մուտքի և պատուհանների հորիզոնական համաչափությունները: Լուսավորության համակարգը նախագծված է այնպես, որ գիշերային ժամերին շենքը դառնա տարածքի վիզուալ առանցքը՝ շնորհիվ ճակատային հորինվածքների ներքին և արտաքին լուսարձակման:

Ստեղծված նախագիծը բխում է ՀՀ մշակութային զարգացման ռազմավարությունից, նպատակ ունի ապահովել համաշխարհային և ազգային թատրոնի արժանապատիվ հարթակ, խթանել մշակութային կրթության տարածումն ու հասանելիությունը:

Շինարարական լուծումներ

Գլխավոր հատակագիծ

- Շենքի տեղադրման սկզբունք՝ ըստ օպտիմալ կողմնորոշման, գլխավոր մուտքի պահպանվող մասի եզրագծով
- Շենքը հատակագծված է ճակատով գլխավոր մուտքի ուղղությամբ
- Շենքի չափերը հատակագծում՝ 55,9 մ x 30,9 մ
- Հարկայնությունը՝ մեկ ստորգետնյա և երեք վերգետնյա հարկ
- Բարձրություն՝ 21,0 մ, չափված մուտքի հատակից մինչև բարձրագույն կետը
- Տանիքային տարրեր՝ տեխնիկական հարկ, մետաղական ֆերմաներ / հարթ, կազմակերպված արտաքին ջրահեռացմամբ

Կառուցվածքային լուծում

- Կրող համակարգ՝ մոնոլիտ բետոնե / շրջանակային / մետաղական / քարե
- Հիմք՝ սալային հիմք՝ ըստ ինժեներա-երկրաբանական եզրակացության
- Հարկամիջային ծածկ՝ մոնոլիտ երկաթբետոն
- Տանիք՝ հարթ, ջրահեռացման համակարգով
- Արտաքին պատեր՝ պենոբետոն, աղյուս, ֆասադային համակարգ (օդափոխվող)
- Երեսապատում՝ ֆիբրոցեմենտ / Վանաձորի ֆելզիտ / բազալտ / ապակի, մետաղական ճաղաշար

Շինարարական ծավալներ

- Շենքի կառուցապատման մակերես՝ 1880,0 մ²
- Նկուղային հարկ -3,9 / -5,5 նիշ – 1683,0 քմ
- Առաջին հարկ +0,00 / +1,20 նիշ – 1878,0 քմ



- Երկրորդ հարկ - +4,60 նիշ – 1675,0 քմ
- Չորրորդ հարկ + 8,50 նիշ – 1683,0 քմ
- Ընդհանուր մակերես՝ 6,919,0 մ²
- Օգտակար մակերես՝ 6045,0 մ²
- Նստարանների քանակ՝ մեծ դահլիճ – 400 նստատեղ, փոքր դահլիճ 100 նստատեղ (հաշվարկվել է ըստ 0.5 մ² մեկ անձի համար՝ ՀՀՇՆ 2.05.02-2006)

Ֆունկցիոնալ հատակագծային լուծումներ

Բազմաֆունկցիոնալ բաժանում

Շենքը ունի 2 եվակուացիոն աստիճանավանդակ, նկուղից մինչև երրորդ հարկ, դրանցից մեկը մինչև տեխնիկական հարկ, եկու կոր աստիճաններ տանող դեպի երկրորդ հարկի օթյակներ, մյուս կողմից ևս ելուսով շարունակվող դեպի երրորդ հարկ: Ունի նկուղից դեպի առաջին հարկ բարձրացող երկու աստիճանավանդակ: Նախատեսված է երկու վերելակ, որից մեկը սպասարկում է հանդիսատեսին, մյուսը աշխատակիցներին, մեկ բեռնատար վերելակ նկուղից դեպի առաջին հարկ:

Ներսից և դրսից նախատեսված են թեքահարթակներ հաշմանդամների համար, միջանցքներում, դահլիճում, և դրսում: Ներսի այն աստիճանները որոնք ունեն մինչև 1,2-1,6 մ բարձրություն, հաշմանդամների տեղափոխման համար կից ունեն սայլակի պլատֆորմային վերելակ:

Նկուղային հարկում

- Հանդիսատեսի հանդերձարան, սանհանգույցներ, բեմի մեխանիզմի և դրան սպասարկող սենյակներ, թաքստոց՝ 303,0 քմ, պահեստներ, նկարիչ-դերձակի սենյակ, տեխնիկական և ինժեներական հանգույցների սենյակներ, հագուստի պահեստ, սանահանգույցներ, աշխատակիցների սենյակներ

Առաջին հարկում

- Մուտքային գոտի՝ նախասրահ / ճեմասրահ, պահոց, տոմսարկղ, աստիճաններ
- Դահլիճ՝ 350 տեղով, հաշմանդամների համար նախատեսված վայրերով
- Բեմ՝ մակերես՝ 142,0 մ², բարձրություն՝ 16,0 մ, ետնաբեմ և գրպաններ՝ 118.5 քմ
- Բեմի հետևամաս՝ պահոց/արհեստանոց, փոխազդման տարածքներ, ռեկվիզիտ, դերասանների հանգստի սենյակ, դիմահարդարի սենյակ, լուսային սարքերի պահեստ-արհեստանոց, սանհանգույցներ,



- Տեխնիկական գոտիներ՝ ինժեներային հանգույցներ, լուսավորություն
- Կառավարում՝ ձայն, լուս, մոնիտորինգ
- Օժանդակ տարածքներ՝ սանհանգույցներ, հանդերձարաններ, արտիստական սենյակներ, ադմինիստրատիվ սենյակներ
- Քանդակների / դեկորների պահեստ՝ առնվազն 8 մ բարձրությամբ՝ ըստ պահանջի
- Բեռնաբարձ վերելակ՝ դեկորների տեղափոխման համար

Երկրորդ հարկում

- Ցուցասրահ – սրճարան, օթյակ 50 հանդիսատեսի մամար, գրիմանոցներ 8 հատ, նկարիչ-բուտոֆորիստ, պահեստներ և սանհանգույցներ, պատշգամբ:

Երրորդ հարկում

- 100 տեղանոց դահլիճի նախասրահ, դահլիճ, ետնաբեմ, օպերատորական սպասրկող սենյակներ, աշխատակազմի սենյակներ, տնօրենի սենյակ ընդունարանով, փորձասենյակներ, հյուրերի գրիմանոց, տերասա:

Տարեց և Հաշմանդամ անձանց մատչելիություն

Հաշվի առնված են՝

- Հաշմանդամության սայլակով մուտք և տեղաշարժ՝ թեքահարթակներ, վերելակներ, շեմեր
- Հատուկ տեղեր դահլիճում
- Սանհանգույցների հարմարեցում
- Ըստ ՀՀՇՆ 2.05.02-2006 և ՀՀ «Հավասար իրավունքների մասին» օրենքի
- ☒ Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովված են՝
- թեքահարթակներ ($\leq 8\%$ թեքությամբ)
- հարմարեցված սանհանգույցներ
- մատչելի ճեմասրահ, դահլիճում անվասայլակների համար նախատեսված տեղեր
- վիզուալ-ձայնային նշաններ
- պակասող լսողություն ունեցող անձանց համար վիզուալ հաղորդակցման համակարգեր (Էկրանային ցուցադրիչներ)

Հրդեհային ապահովում

- Էվակուացիոն ելքեր՝ 5 հատ, անկախ ուղղությամբ



- Մուտքեր և միջանցքներ՝ համապատասխան ՀՀՇՆ 31-03.07-2024
- Հրդեհային ջրատար, ռեգերվուար՝ հաշվարկով՝ 250,0 քմ բեմի համար
- Անվտանգության նշաններ՝ ըստ ISO 7010
- Հրդեհագերծման միջոցներ՝ հրդեհազգուշացուցիչ, ավտոմատ համակարգ

☒ Ապահովված են՝

- 5 արտակարգ ելք
- հրդեհակայուն շերտավորում
- ազդանշանային համակարգ
- հակաձխային օդափոխություն
- արտակարգ լուսային նշաններ՝ ըստ ISO 7010
- պլանավորված ռեգերվուար՝ բեմի մակերեսի հաշվարկով ($V = 0.06 \text{ մ}^3/\text{մ}^2$ բեմ)

Ինժեներական համակարգեր (ամփոփ)

- Էլեկտրամատակարարում՝ երկֆազ / եռաֆազ համակարգ
- Ջեռուցում՝ կաթսայատան միջոցով / կենտրոնացված
- Օդափոխություն և օդորակիչ համակարգ՝ նախագծված է դահլիճի համար առանձին
- Խմելու ջուր, կոյուղի՝ միացված կենտրոնական ցանցին
- Լուսավորություն՝ բնական + արհեստական՝ բեմում DMX համակարգով կառավարում

Շինարարական կազմակերպման դրույթներ

- Շինարարությունը իրականացվելու է փուլային՝ հիմքեր, կառուցվածք, արտաքին հարդարանք
- Աշխատանքների հերթականություն՝ ըստ գրաֆիկի (լրացվում է)
- Շինհրապարակը գծանշված է, ժամանակավոր ցանկապատում՝ ապահովված է

Էկոլոգիական և սեյսմիկ դիտարկումներ

- Սեյսմիկ գոտի՝ 9 բալ, նախագծված է ըստ ՀՀՇՆ 2.01.09-2009
- Օգտագործվել են բնապահպանական մաքուր նյութեր
- Թափոնների տեսակավորում և տեղափոխում՝ նախատեսված

Ճարտարապետական կերպար

- Շենքը ունի պահպանվող մուտքային ծավալ, սյուներով և



զարտախախշերով, որը համադրվել է նոր կառուցվող ծավալում
ժամանակակից ճարտարապետական հստակ արտահայտված ֆասադով,
և որոշակի կամարային հատվածներով: Արդյունքում հնի և նորի հստակ
ընդգծում:

- Նյութերը ընտրված են տարածաշրջանի կլիմային համապատասխան
- Գունային լուծումները ներդաշնակ են շրջապատին
- Գիշերային լուսավորություն՝ ընդգծում է ճակատները և մուտքերը

Ֆասադների և արտաքին երեսապատման մանրամասն նկարագիր

Շենքի ճակատային լուծումները նախագծվել են համադրված բնական և արդի
արդյունաբերական երեսապատման նյութերով՝ շեշտադրելով մոնումենտալություն,
նյութի ազնվություն և ժամանակակից ճարտարապետական արտահայտչամիջոցներ:
Ֆասադներում կիրառվում են երեք հիմնական տեսակի երեսապատման նյութեր՝ ըստ
ծավալային լուծումների, հարթությունների ուղղվածության և արևային
կողմնորոշման:

- ✓ **Ֆելզիտ (կարմրավուն կամ բաց մոխրագույն երանգներով)**
Քանի որ շենքի դիմային հատվածի պահպանվող կտորը իրականացված է
Վանաձորի ֆելզիտ քարով, նոր նախատեսվող շինության որոշակի
հատվածներ օրինակ կամարային հանգույցները ընդգծվել են ևս այդ
քարով ֆելզիտը տեղադրվում է ճակատների միջին և վերին
հատվածներում՝ հիմնական ծավալային համամասնությունները
ընդգծելու նպատակով: Այն կիրառվել է ուղղահայաց հորինվածքով՝ խորը
ստվերային բացվածքներ ստեղծելու նպատակով, ինչը ոչ միայն
գեղագիտական, այլև արևային պաշտպանիչ ֆունկցիա ունի: Քարն ունի
թեթև փայլ, գունային տաք երանգավորում, ինչը սազում է թատրոնի
հանրային ճարտարապետական կերպարին: Կցման համակարգը՝
անտեսանելի մեխանիկական փակցում ալյումինե ենթակառուցվածքին՝
օդափոխվող շերտով, ըստ ՀՀՇՆ պահանջների:
- ✓ **Բազալտե սալիկներ (սև կամ մոխրագույն երանգով)**
Օգտագործված են հիմնականում շենքի ստորին գոտում՝ պոկոլե (բազա)
հատվածներում առաջին հարկի, կամարներից հետո շարունակվող
երկրորդ և երրորդ հարկերում մետրիկ շարքով պատուհանների
շրջանակների, դրանց արանքում խորշերի հատվածներում՝ շեշտելու
շենքի ծանրությունն ու հաստատուն բնույթը: Բազալտը, լինելով բարձր
ամրության և ցրտադիմացկուն բնական քար, ապահովում է
խոնավակայունություն, մեխանիկական պաշտպանություն և ժամանակի
նկատմամբ դիմացկունություն: Սալիկների հորինվածքը



ուղղահայաց/հորիզոնական շարքով է՝ 600×300 մմ միջին չափով, 10-15 մմ բաց թողնված հարդարական ֆուգայով:

- ✓ **Ֆիբրոցեմենտե սալիկներ** (գրաֆիտ, սպիտակավուն կամ բեժի երանգներով)՝ Սալիկները կիրառված են ավելի քիչ տեսանելի հատվածներում, չքանգարելով շենքի գեղագիտական տեսքին, ապահովելով գրագետ և հարմար պատի երեսապատում: Ֆիբրոցեմենտը ապահովում է թեթև կշիռ, ճկուն մոնտաժային հնարավորություններ և մեծ ծավալների հարթ ձևավորում՝ առանց միջնակցման: Սալիկները տեղադրվում են օդափոխվող շերտով, 20–30 մմ օդային բացվածքով, որը նաև ծառայում է որպես ջերմամեկուսիչ տարր՝ համաձայն ՀՀՇՆ 2.04.02-2003 և ՀՀՇՆ 2.01.02-2016 պահանջների:

Երեսապատման շերտագրության հիմնական շերտերը՝ ըստ նորմերի՝

- Ներքին կրող պատ՝ պենոբետոն/բլոկ/մոնոլիտ
- Ջերմամեկուսիչ շերտ՝ քարե բամբակ ≥ 150 մմ
- Պարոլացնող թաղանթ
- Օդափոխվող խոռոչ ≥ 20 մմ
- Երեսապատման շերտ՝ ըստ նյութի

Տեխնիկական և էսթետիկ նպատակներ՝

- Բազալտը՝ բազային պաշտպանիչ շերտ
- Ֆելզիտը՝ արտահայտիչ ճակատային հորինվածք
- Ֆիբրոցեմենտը՝ ժամանակակից շերտայնություն և գունային հավասարակշռում

Հրակայունության և պահպանման ցուցանիշներ՝

- Բազալտ՝ A1 կարգի (չի այրվում)
- Ֆելզիտ՝ A1 կարգի
- Ֆիբրոցեմենտ՝ B-s1, d0 (ըստ EN 13501-1)
- Կցման համակարգերը՝ քամու և սեյսմիկ հաշվարկով՝ ըստ ՀՀՇՆ 2.01.07-2016 և EN 1991-1-4

Նոր կառուցվող կաթսայատուն


- Շենք – 24,0 քմ, շենքից և էլ. կայանից բավարար հեռավորության վրա, մեկ վերգետնյա հարկով, արտաքին պատերը բազալտե երեսպատումով, արտաքին չափեր՝ 6.0 x 4.0 մ





Բացօթյա ամֆիթատրոն


- Մակերեսը՝ 140 քմ, բակային հատվածում: Հարթակների երեսպատումը բազալտե սալերով և ջրակայուն փայտե տախտակներով:

Պատկեր 9: Գլխավոր հատակագիծ / Գոյություն ունեցող վիճակ



Պատկեր 10: Գլխավոր հատակագիծ / Հիմնական գծագիր





6.3. Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակացույցը

Դրամատիկական թատրոնի կառուցման աշխատանքները կտևեն մոտ 2-3 տարի:

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» սցենարը ենթադրում է Հովի. Արելյանի անվան դրամատիկական թատրոնի նոր շենքի չկառուցման տարբերակը: Այս դեպքում՝

- Վանաձորի և հարակից բնակավայրերի բնակիչները կշարունակեն օգտագործել տեխնիկապես և ֆունկցիոնալորեն հնացած մշակութային ենթակառուցվածք, որը չի համապատասխանում ժամանակակից թատերական և հասարակական պահանջներին:
- Մշակութային ծառայությունների որակն ու մատչելիությունը կմնան սահմանափակ՝ խոչընդոտելով տարածաշրջանում մշակութային կյանքի զարգացումը:
- Սահմանափակ կմնա համայնքի մշակութային ներուժը, ինչպես նաև բաց կթողնվեն սոցիալ-տնտեսական ակտիվացման հնարավորություններն՝ ի



դեմս ստեղծվելիք աշխատատեղերի և միջոցառումների կազմակերպման նոր հնարավորություններին:

- Վտանգվում է համայնքի մշակութային ինքնության պահպանումը և երիտասարդ սերնդի մշակութային կրթության շարունակականությունը:

Ուստի, «ոչ մի գործողություն» տարբերակը չի համարվում կենսունակ և կայուն այլընտրանքային տարբերակ, քանի որ այն հակասում է ինչպես պետական առողջապահական քաղաքականության առաջնահերթություններին, այնպես էլ համայնքային կարիքներին:

7.2. Ծրագրի առավելությունները

Առաջարկվող տարբերակը՝ Վանաձորի դրամատիկական թատրոնի նոր շենքի կառուցումը, ունի մի շարք ակնհայտ առավելություններ՝ ուղղված թե՛ մշակութային, և թե՛ տարածքային զարգացման նպատակներին: Մասնավորապես՝

- Կբարելավվի թատերական և մշակութային ծառայությունների որակը և հասանելիությունը՝ շնորհիվ նորարարական նախագծային լուծումների, տեխնիկական հագեցվածության և բազմաֆունկցիոնալ տարածքների ստեղծման:
- Թատրոնը կծառայի որպես համայնքային կենտրոն՝ խթանելով մշակութային մասնակցությունը, ստեղծարար կրթությունը և երիտասարդների ներգրավվածությունը:
- Կխթանվի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ պայմանավորված աշխատատեղերի ստեղծմամբ, սպասարկման ոլորտի աշխուժացմամբ և թատերական տուրիզմի զարգացման հնարավորություններով:
- Նախագիծը կնպաստի քաղաքային միջավայրի բարեկարգմանն ու կանաչապատմանը՝ նպաստելով հանրային տարածքների արդիականացմանն ու գրավչությանը:
- Շինարարական աշխատանքները կիրականացվեն բնապահպանական նորմերին համապատասխան՝ ներառելով աղմուկի, փոշու, թափոնների և երթևեկության կառավարման միջոցառումներ, ինչպես նաև բնակիչների իրավունքների և բարեկեցության պաշտպանություն:
- Նախագծի ընթացքում հնարավորինս կներգրավվի տեղական մարդկային ռեսուրսը, այդպիսով ամրապնդելով համայնքային սեփականության զգացումը և մասնակցային մոտեցումը զարգացման գործընթացում:

Բացի այդ, ծրագրի շրջանակում շինարարական աշխատանքները կիրականացվեն շրջակա միջավայրի նկատմամբ զգայունությամբ՝ նախատեսվելով աղմուկի, փոշու, թափոնների կառավարման և հարակից բնակչության



բարեկեցության պահպանման համապատասխան միջոցառումներ:
Աշխատանքներում հնարավորինս կներառվի տեղական աշխատուժ՝ համայնքի
ներգրավվածությունը առավելագույնի հասցնելու նպատակով:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

8.1. Ջուր.

Տեղում առկա են բոլոր ենթակառուցվածքները, այդ թվում Վեոլիա ջուր ՓԲԸ
ջրագիծը և կոյուղատարը: Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը, «Վեոլիա
Ջուր» ընկերության հետ կկնքի նոր պայմանագիր և կվերսկսվի ջրամատակարարումը
ու կսկսի գործել կոյուղին:

Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25
"Внутренний водопровод и канализация зданий", նորմերի:

Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Շինարարական աշխատանքային ռեժիմը – առավելագույնը 30 ամիս, 22 օր/ամիս,
օրը 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում
է.

$$W_{\text{խ.տ.}} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2, \text{ որտեղ}$$

n – Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 8 մարդ

N – ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 մ³/օր/մարդ

T_1 – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 660,

n_1 – Բանվորների թվաքանակն է (օրական)- 42 մարդ,

N_1 - Բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 մ³/օր/մարդ,

T_2 - աշխատանքային օրերի թիվն է - 660.

$$W_{\text{խ.տ.}} = 8 \times 0.016 \text{ մ}^3 \times 660 + 42 \times 0.025 \text{ մ}^3 \times 660 = 777.48 \text{ մ}^3/\text{շին}, 1.178 \text{ մ}^3/\text{օր}:$$

Ջրի ծախսը տրանսպորտային միջոցների անիվների լվացման համար

Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է մեկ կամ երկու
մեքենա: Տեղադրվելու են 2 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման
ընդունված է 120 լ/հատ:

$$Q_2 = 120 \times 2 \times 2 = 480 \text{ լ կամ } 0.48 \text{ մ}^3/\text{օր}$$

$$\text{Շին.ընթացքում՝ } 0.48 \text{ մ}^3/\text{օր} \times 660 \text{ օր} = 316.8 \text{ մ}^3/\text{շին}$$

Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T,$$



Որտեղ՝ S – շինհրապարակի թրջվող մակերեսն է, 2400 մ²,

K – ջրցանման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 160 օր/տարի կամ 480 օր/շին:

Այսպիսով՝

$$V_1 = 2400 \times 0.0015 \times 480 = 1728 \text{ մ}^3/\text{շին:}$$

Միջին օրեկանը կազմում է 3.6մ³:

Շահագործման փուլում ջրցան չի նախատեսվում:

Ընդամենը շինարարության ընթացքում ջրապահանջը կկազմի՝

$$777.48 + 316.8 + 1728 = 2822.28 \text{ մ}^3/\text{շին:}$$

Արտահոսք.

Ջրցանը արդյունքում արտահոսք չի առաջանում

Անիվների լվացման ընթացքում ջրի կորուստը կազմում 10 տոկոս, այստեղից արտահոսքը կկազմի՝ $316.8 \times (1 - 0.1) = 285.1 \text{ մ}^3/\text{շին:}$

Կենցաղային ջրօգտագործման կորուստները կազմում են 5 տոկոս, այստեղից՝

$$777.48 \times (1 - 0.05) = 738.6 \text{ մ}^3/\text{շին:}$$

$$\text{Ընդամենը արտահոսքը կկազմի՝ } 285.1 + 738.6 = 1023.7 \text{ մ}^3/\text{շին:}$$

Տարածքի բոլոր կեղտաջրերը հավաքվում են մեկ ցանցի մեջ և միանում Վեռլիա ջուր ՓԲԸ կոյուղատարին:

8.2. Օգտագործվող նյութեր

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ



9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

9.1.1. Օդային ավազան.

Դրամատիկական թատրոնի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

ա) Շինությունների քանդման աշխատանքների ընթացքում առաջացող փոշի

Շինությունների քանդման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է քանդվածքում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.2

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G - քանդված զանգվածի քանակը՝ 1538 մ³, կամ 3076 տ:

Քանդման աշխատանքները իրականացվելու են 2 ամիս, կամ 44 օր:

$G = 3076 \text{ տ} : 44 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 8.7 \text{ տ/ժամ}:$

$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.6 \times 0.2 \times 8.7 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 0.145 \text{ գ /վրկ}:$

Արտանետումների քանակը քանդման աշխատանքների արդյունքում կկազմի՝
 $0.145 \text{ գ/վրկ} \times 44 \text{ օր} \times 8 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1\,000\,000 \text{ գ/տ} = 0.18 \text{ տ}:$

բ) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները

Փորման բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը նույնպես կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 - 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02



P₃ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

P₄ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

P₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

P₆ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող գրունտի և հողի քանակը՝ 18200 մ³ ամբողջ շինարարության ընթացքում, կամ 29120 տ:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են 2 – 3 տարի, որից հողային աշխատանքները՝ 6 ամիս, կամ 132 օր:

$G = 29120 \text{ տ} : 132 \text{ օր} : 8 \text{ ժամ/օր} = 27.5 \text{ տ/ժամ}:$

$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.4 \times 0.4 \times 27.5 \times 10^6 \times 0.5 \times 1.0) / 3600 = 0.61 \text{ գ /վրկ}:$

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

$0.61 \text{ գ/վրկ} \times 132 \text{ օր} \times 8 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} : 1\,000\,000 \text{ գ/տ} = 2.3 \text{ տ}:$

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացքում:

գ) Վառելանյութի օգտագործումը

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 80 - 90 լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 52800 լ կամ 44.88 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

Դիզելային վառելիքի այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ



Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3
-------------------	------	-------	------	------	-------	------	-----

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 14-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

Աղյուսակ 14: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանե- տումները, գ/կգ	Արտանետումները, տ/շին.ժամ
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	36.4	1.63
	Ածխաջրածիններ	8.403	0.38
	NO _x	42.422	1.89
	Մուր	4.3	0.19

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են էլնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2 \Sigma k_s b$, որտեղ՝

k_s -ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 44.88 տ/շին.ժամանակ:

$SO_2 = 2 \times 44.88 \times 0.002 = 0.18$ տ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15: Շինարարության փուլի արտանետումները

N	Արտանետվող անվանումը	Արտանետումը, տ/շին.ժամ
1	Անօդգանական փոշի	2.48
2	Ածխածնի օքսիդ	1.63
3	Ածխաջրածաններ	0.38
4	Ազոտի երկօքսիդ	1.89
5	Մուր	0.19
6	Ծծմբային անհիդրիդ	0.18

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:



Բացի վերոնշյալից նախատեսվում է իրականացնել փոշու ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ, քանի որ գործունեության տարածքին մոտ կան բնակելի և հասարակական շինություններ: Փոշու գործիքային չափումների կետերը պետք է որոշվեն, իսկ մեթոդիկային պետք է մշակվի նախօրոք (մինչ շին.աշխատանքների սկիզբը): Չափումները պետք է իրականացվեն՝ փոշու մակարդակները ֆիքսելու և ցանկացած փոփոխությունն արձանագրելու նպատակով: Դա թույլ կտա անընդհատ հետևել և լավ վիճակում պահպանել օդի որակը, իսկ անհրաժեշտության դեպքում անմիջապես իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ փոշու մակարդակի նվազեցման համար:

Բացի փոշու մոնիթորինգից անհրաժեշտ է լինելու նաև իրականացնել փոշեկլանիչ ցանցապատում / թաղանթապատում մինչև 4մ բարձրությանմբ հատկապես տարածքի հյուսիսային մասում, որտեղ անմիջական հարևանությամբ առկա է շենք՝ օգտոտգործվող հասարակական նպատակներով: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

Ի լրումն վերոնշյալի, ստորև ներկայացված են ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով սահմանված այն պահանջները, որոնք պետք է պահպանվեն շինարարական աշխատանքների ընթացքում: Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների՝ շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները և քաղաքացիները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

ա) պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ,

գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

դ) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,

ե) հղկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,



զ) սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

է) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում:

Արգելվում է կենցաղային և արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

9.1.2. Ջրային ավազան

Մինչև շինարարության սկիզբը կվերականգնվի մախցումը Վեռլիա ջուր ջրատարին և կոյուղու համակարգին և կեղտաջրերը կլցվեն կոյուղու ցանց:

Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում: Տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Փամբակ գետն է, որը գտնվում է ներկայացված տարածքից ավելի քան 750մ հեռավորության վրա (դեպի հյուսիս):

9.1.3. Թափոնների կառավարում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երկու տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են.

- Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ /ծածկագիրը՝ 91200601 01 00 4/, 1538 մ³ ծավալով, կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած



չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) /ծածկագիրը՝ 9120040001004/, 12672 մ³, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոկվի Վանաձորի քաղաքային աղբավայր:

- «Հողային հանվածքներ» թափոնատեսակ /ծածկագիրը՝ 3140110101005/: Վտանգավորության դասը՝ 5/նշ վտանգավոր/: Ծավալը՝ 18200 մ³, կօգտագործվի որպես ետլիժք, մնացորդը՝ տարածքների հարթեցման համար:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա:

9.1.4. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա էական բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանի որ տեղում բերրի հողաշերտ չկա:

Հանված հողային զանգվածը օգտագործվելու է հետլիցքի և տարածքի բարեկարգման համար: Մանրամասները ներկայացված են ստորև.

1. Ընդհանուր հողային ծավալները կազմել են լիցք - 10.7մ³
 - Հանույթ - $10922.9 + 60.0 = 10982.9$ մ³ (հակահրդեհային ավազանի կառուցումից հետո, փորվում է կաթսայատան փոսորակը, որի ծավալը կազմել է 60.0մ³):
2. Բուսական $h=0.2$ մ շերտի քանդում - 375մ²/75.0մ³
3. Հանույթը կազմեց - 10907.9 մ³, ըստ բնահողերի կազմել են՝
 - ա) Թափվածքային բնահող (8.2II-կարգ) - 5563.0մ³ (լցակույտ)
 - բ) Ավազակավեր (33.4 III-կարգ) - 2535.0մ³ (լցակույտ)
 - գ) Խիճ, մանրախիճ կավազային լցոնով մինչև 25-35% (13 IV-կարգ) - 2809.9մ³, որից 820մ³ լցակույթ
4. Բոլոր փոսորակների հետլիցքի ծավալը - 1979.2մ³
5. 33.4III բնահողի հետլիցքի ծավալը - 10.7մ³

9.1.5. Կենսաբազմազանություն

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը փոքր է որպեսզի



զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքում չկան վայրի բուսատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում բացասական ազդեցության կենսաբազմազանության վրա չի նախատեսվում, քանի որ տարածքը երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության և այնտեղ կենսաբազմազանությունը գործնականում բացակայում է: Տեղամասի առկա վնասված և չորացած ծառերը կհատվեն և Ծրագրի իրականացման շրջանակներում կիրականացվի կանաչապատում, ինչը դիտարկվում է նշված և հարակից տարածքների համար որպես դրական ազդեցություն:

Ըստ հետազոտությունների, դրամատիկական թատրոնի կառուցման համար նախատեսված տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայացվող տարածքը երկրորդ տարիներ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Համաձայն ՀՀ կառավարության 9 փետրվարի 2004 թվականի N 49-Ն որոշման՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Վանաձոր քաղաքում կան բազում պատմամշակութային հուշարձաններ, որոնից մեկը՝ Հ. Աբելյանի հուշարձանը (1965թ., քանդ.՝ Մ. Մինասյան) գտնվում է Ծրագրի իրականացման տարածքի հարևանությամբ: Չնայած, որ ներկայացված հուշարձանը գտնվում է տարածքին մոտ (պատկերը ներկայացված է ստորև), Ծրագրի իրականացման շրջանակներում որևէ բացասական ազդեցություն չի նախատեսվում: Հնարավոր ազդեցությունների բացառման նպատակով սույն հաշվետվության ԲԿՊ-ում առաջարկվել են համապատասխան միջոցառումներ:



9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային պարկի, զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի, թե՛ շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.1.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Դրամատիկական թատրոնի կառուցման ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը և նախատեսված մեղմացնող միջոցառումները, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր: Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

9.1.9. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը հիմնականում ցածր է, սակայն քանի որ տեղանքը գտնվում է բնակելի մարդաշատ տեղամասում և ճանապարհի հարևանությամբ, այդ հատվածում աղմուկի մակարդակը գնահատվում է որպես միջին-բարձր (հիմնականում՝ ավտոտրանսպորտային միջոցներ):

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն



հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը, աշխատակիցների և բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքին մոտ կան մի քանի բնակելի և հասարակական շենք-շինություններ, որոնց վրա բացասական ազդեցությունները կանխելու նպատակով պետք է իրականացվեն աղմուկի ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ և անհրաժեշտության դեպքում կիրառել համապատասխան մեղամցնող միջոցառումներ: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Սոցիալական միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից



դուրս,

- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան հանգստացողների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները



շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:



Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

9.1.13. Բարեկարգում և կանաչապատում

Գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որի արդյունքում ներկայացվող տարածքի որոշակի մասը պատված կլինի թարմ ծառաթփային բուսականությամբ: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել մոտ 25 ծառերի հատում, որոնցից՝ 10 հատ ընկուզենի, 5 հատ խնձորենի, 5 հատ տանձենի, 1 հատ եղևնի, մեկ հատ ուռենի և 3 հատ տուլաներ: Հատված ծառերի փոխարեն կտնկվեկեն մի քանի անգամ ավելի շատ ծառեր:

Նախատեսվում է թատրոնի տարածք բերել մոտ 119մ³ բուսահող և իրականացնել սիզամարգերում բուսահողի փռում, h=20սմ, հարթեցում և սերմերի ցանում՝ 595մ³ ծավալով:

Մանրամասները ներկայացված են ստորև՝ պատկերներում.





9.2. Բնապահպանական ազդեցությունները և դրանք մեղմող միջոցառումները դրամատիկական թատրոնի շահագործման փուլում

9.2.1. Օդային ավազան.

Հաշվի առնելով Ծրագրի տեխնիկական բնութագրերը, շահագործման փուլում
օդային ավազանի վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում:

9.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է՝

- աշխատողների համար խմելու ջուրը հասանելի կլինի դրամատիկական թատրոնի
տարածքում,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները ապահովված կլինեն
դրամատիկական թատրոնի տարածքում,
- կկառուցվի ոռոգման համակարգ՝ նախատեսվող կանաչապատ տարածքների
ոռոգման համար:

9.2.3. Թափոնների կառավարում

Տարածքում առաջացած կենցաղային և շինարարական աղբը հավաքվելու է
համապատասխան վայրերում և պարբերաբար տեղափոխվելու է Վանաձորի
համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

9.2.4. Հողային ռեսուրսներ

Դրամատիկական թատրոնի շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա
որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

9.2.5. Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ

Դրամատիկական թատրոնի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն
ներառվելու և բուսական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

Կենդանական աշխարհ

Դրամատիկական թատրոնի շահագործման ժամանակ նոր տարածքներ չեն
ներառվելու և կենդանական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում:

9.2.6. Աղմուկ

Գործունեության իրականացման արդյունքում որոշակիորեն կավելանա
տեղանքի աղմուկը, մասնատրապես՝ ցերակային ժամերին, ինչը սակայն չի ունենա
էական բացասական ազդեցություն:



9.3. Սոցիալական ծրագիր

Շինարարության և շահագործման փուլերում գործունեության իրականացումն նաև ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ մասնավորապես, բացվելու են նոր աշխատատեղեր և առաջնահերթություն է տրվելու թե՛ շինարարության և թե՛ սպասարկման ընթացքում ներգրավել մասնագիտական և ոչ մասնագիտական աշխատուժ հարակից համայնքներից/բնակավայրերից:

10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպվել է իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:



11.ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային լսումը կազմակերպվել և իրականացվել է 2025թ-ի մայիսի 21-ին ժամը 11:00-ին՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանում:

Հանրային քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (հանրային ծանուցման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է օրաթերթում) և համայնքին (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ):

Հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է գործունեության վերաբերյալ նախնական համաձայնության մասին համայնքի ավագանու որոշումը:

Վերը ներկայացվածի հիմնավորող փաստաթղթերը կցված են սույն ՇՄԱԳ-ի փաթեթին:



ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հնարավոր բացասական ազդեցություն	Մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն/պատասխանատու	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԻԼ					
Օդային ավազան	- պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով - պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար. - խուսափել շարժիչների անգործությունից. - միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները. - կատարվել գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության. - ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին - կազմակերպել և իրականացվեն փոշու ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ՝ շինարարության ընթացքում փոշու մակարդակի արձանագրման նպատակով - կազմակերպել և իրականացվեն փոշու ելակետային	Կապալառու	Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիության	ՀՀ Քաղաքաշինության Կոմիտե	ընթացիկ ծախսեր



	և ընթացիկ գործիքային չափումներ՝ շինարարության ընթացքում փոշու մակարդակի արձանագրման նպատակով - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով - Արգելել այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում - Արգելել կենցաղային և արտադրական աղբի այրումը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում				
Զրային ռեսուրսներ	- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար մատակարարել խմելու որակի ջուր՝ բերովի (շշերով), - հրդեհաշիջման նպատակով տեղադրել ջրի բաքեր - շինհրապարակում տեղադրել 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով, - ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, - ճանապարհների ջրցանն իրականացնել տարվա չոր	Կապալառու	Շին.աշխատանքներ ի ժամանակ՝ ըստ պահանջարկի	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	ընթացիկ ծախսեր



	եղանակներին՝ ըստ անհրաժեշտության - շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը ուղղորդել տարածքում տեղադրված բիոգուգարան - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի: Կեղտաջրեր - Մինչև շինարարության սկիզբը վերականգնել միացումը քաղաքային կոյուղու համակարգին:				
Հողային ռեսուրսներ	- գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր նախատեսել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վտանգավոր նյութերի պահեստավորումը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա, - ավելցուկային գրունտ չի առաջանա, - հանված հողային զանգվածը օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես հողային աշխատանքների ընթացքում	ՀՀ Քաղաքաշինության Կոմիտե	ընթացիկ ծախսեր
Ազդեցություն կենսաբազմազանության	- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես և	ՀՀ Քաղաքաշինության	ընթացիկ ծախսեր



վրա	պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները - պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան - շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:		հողային աշխատանքների ընթացքում	ն Կոմիտե	
Թափոնների առաջացում և կառավարում	- շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել անմիջապես հողային աշխատանքների տեղամասում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ըստ կուտակման տեղափոխել Վանաձորի համայնքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր - կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում աղբավայրերում՝ համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված - արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօդյա այրումը - շինանյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից	Կապալառու	Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	ընթացիկ ծախսեր



Աղմուկ և թրթռում	Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է. - աղմկոտ աշխատանքներն իրականացնել ցերեկվա ժամերին, - մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել - կազմակերպել և իրականացվնել աղմուկի ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ՝ շինարարության ընթացքում աղմուկի մակարդակի արձանագրման նպատակով	Կապալառու	Շին. աշխատանքներ ի մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	ընթացիկ ծախսեր
Պատմամշակութային գտածոների հայտնաբերում	- շին. աշխատանքները կազմակերպել հնարավորինս հեռու Հ. Աբելյանի հուշարձանից, - հնարավորինս բացառել շին. տեխնիկայի տեղաշարժը հուշարձանին հարակից տարածքներում, - տեղադրել պաշտպանիչ ծածկ հուշարձանի և շին. աշխատանքների միջև / ըստ անհրաժեշտության, բացառել շինարարական նյութերի, վտանագովոր նյութերի և այլ իրերի կուտակումը կամ պահեստավորումը հուշարձանին մոտ տարածքներում, - գտածոներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել համապարտասխան մարմիններին	Կապալառու	-	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	-
Առողջական խնդիրներ, պատահարներ շինարարական հրապարակում	- աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացող միջոցառումները. - ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական	Կապալառու	-	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	-



	պաշտպանիչ արտահագուստ, - ապահովել, որ բանվորները անվտանգության վերապատրաստում անցնեն - ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն, - ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին, - ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ, - աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում, - Վերապատրաստել էլեկտրական աշխատանքներ իրականացնող անձնազամբ - Աշխատողների ցանիտարահիգենիկ և սանիտարակենցաղային պայամները (լվացարան, հանդերձարան, ճաշարան) ապահովված են լինելու շին. հրապարակի տարածքում				
--	---	--	--	--	--



Արտակարգ իրավիճակներ	Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է. - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - շինարարական նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:	Կապալառու	Գործունեության ընթացքում	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	-
Սոցիալական	Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ մոտ 50 մարդու համար:	Կապալառու	Գործունեության ընթացքում	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	-
Բարեկարգում և կանաչապատում	Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս պատշաճ տեսքի: - շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից, - կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ: - տարածքի կանաչապատումը իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան և ապահովել ոռոգման համակարգ	Կապալառու	Գործունեության ընթացքում	ՀՀ Քաղաքաշինության և Կոմիտե	
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻԼ					



Օդային ավազան	Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:	-	-	-	-
Զրային ռեսուրսներ	Շահագործման փուլում հասանելի կլինի աշխատող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ Այս փուլում ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում	Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	Գործունեության ընթացքում	-	-
Թափոնների կառավարում	-կենցաղային աղբը հավաքվել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ,	Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	Գործունեության ընթացքում	-	-
Արտակարգ Իրավիճակներ	-կետնորնը ապահովվելու է հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով և առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով, - պարբերաբար ստուգել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառել միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը: - տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:	Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	Գործունեության ընթացքում	-	-
Աղմուկ և թրթռում	Շահագործման փուլում որոշակիորեն կավելանա	Վանաձորի Հովհ.	Գործունեության	-	-



	աղմուկի մակարդակը, մասնատրապես ցերեկային ժամերին, ինչը սակայն բացասաբար չի անդրադառնա հարակից բնակավայրի բնականոն կյանքի վրա:	Արելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	ընթացքում		
Սոցիալական	-բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը, -աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով: Շահագործման փուլում ընդգրկվելու են համապատասխան աշխատողներ՝ մոնիթորինգ իրականացնելու նպատակով՝ հերթափոխային գրաֆիկով	Վանաձորի Հովհ. Արելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	Գործունեության ընթացքում	-	-
Բարեկարգում և կանաչապատում	-բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները, -հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները, -գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը,	Վանաձորի Հովհ. Արելյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	Գործունեության ընթացքում	-	-



<u>Մշտադիտարկման միջոցառումներ</u>						
<i>Որ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Ինչու պետք է այդ պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Որտեղ պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Երբ կամ ինչ հաճախականությամբ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Ինչպես պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի</i>	<i>Մոնիթորինգի արժեքը</i>	<i>Ով է պատասխանա- տու մոնիթորինգի համար</i>
Պատմական և մշակութային արժեքներ	Պատմական և մշակութային հուշարձաններին վնաս հասցնելուց խուսափելու համար	Դրամատիկական թատրոն	Նախքան շինարարական աշխատանքները	Գրառումների ուսումնասիրում	Ներառված է նախագծման գնի մեջ	ԿԿ, ԻԳ, Խորհրդատու,
Շինարարական նյութերի որակը	Հավաստիանալ շինարարական նյութերի հուսալիության և մարդկանց առողջության համար դրանց անվտանգ լինելու մեջ	Մատակարարի գրասենյակում կամ պահեստում	Մատակարարման պայմանագրի ուսումնասիրման ընթացքում	Փաստաթղթերի ստուգում	Ներառված է շինարարու- թյան գնի մեջ	ՇԿ



Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում	- Սահմանափակել արտանետումներից հողի և օդի աղտոտումը, - Սահմանափակել վիբրացիայի և աղմուկի հետևանքով հանրությանը հասցվող անհանգստությունը, - Նվազեցնել երթևեկության խափանումը Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը Խուսափել շինհրապարակում աղբի և շինարարական նյութերի մնացորդների հետևանքով հնարավոր պատահարներից Շինհրապարակում և դրա շրջակայքում էսթետիկական տեսքի պահպանման համար	-Շինհրապարակ - Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհները	Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին եւ դրանից դուրս	Շարժման ուղղությամբ շինարարական օբյեկտի հարևան ճանապարհների գնում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
Շինտեխնիկայի տեղաշարժ	- Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում յուղերով հողի և ջրի աղտոտումից	Շինարարական ճամբար և ժամանակավոր հրապարակներ	Սարքավորումների շահագործման ընթացքում	Գործունեության ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ



Հողի էրոզիա	Էրոզիայի երևույթները կանխելու նպատակով	Ջրային հոսքերի ափամերձ տարածքներ և նյութերի պահեստավորման տեղամաս	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Էրոզիայի կանխման միջոցառումների և դրանց արդյունավետության ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
Հողի աղտոտում	Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
	Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Ավտոկայանատեղեր, մոտեցման ճանապարհներ,	Ամսեկան, շահագործման ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՇԿ
Օդի որակ փոշի	Օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ մոտեցման ճանապարհները,	Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՇԿ
Աղմուկ	Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում	Աղմկաչափ	80 ԱՄՆ դոլար	ՇԿ
	Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով	Ավտոկայանատեղեր, մոտեցման ճանապարհներ,	Շաբաթական	Աղմկաչափ	80 ԱՄՆ դոլար	ՄԿ



Երթևեկության անվտանգություն	Երթևեկության անվտանգությունն ապահովելու համար	ՇԿ կողմից օգտագործվող բոլոր ընդհանուր ճանապարհները	Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ
Կենցաղային աղբի առաջացում	Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը	Դրամատիկական թատրոն	Պարբերաբար, շահագործման ընթացքում	Վիզուալ ուսումնասիրություն	Ներառված է շահագործման գնի մեջ	ՍԿ
Շինհրապարակի ռեկուլտիվացիա եւ կանաչապատում	Շինարարության հետևանքով հողածածկի որակի և լանդշաֆտի էսթետիկ տեսքի կորստի նվազեցման նպատակով	Բոլոր շինհրապարակներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները,	Շինարարության ավարտական ժամանակահատվածում	Վիզուալ ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու,
Աշխատողների առողջություն և անվտանգություն	Վնասվածքների եւ վթարների հավանականությունը նվազեցնելու նպատակով	Դրամատիկական թատրոն	Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում	Գործունեության գնում, արձանագրությունների և հաշվետվությունների ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու
		Դրամատիկական թատրոն	Շահագործման ամբողջ ընթացքում	Տեխնոլոգիական մատյանների ստուգում	Ներառված է շահագործման գնի մեջ	ՍԿ, ԻԳ, Խորհրդատու



Պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին	- Նվազեցնել շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ռիսկերը	Բոլոր շինհրապարակներում Դրամատիկական թատրոն	Շինարարության ամբողջ ընթացքում	Պարբերական ստուգումներ	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ
---	---	--	--------------------------------	------------------------	----------------------------------	--------



Հասարակության իրազեկվածություն	Նվազեցնել շինհրապարակին մոտ գտնվող բնակավայրերի վրա ազդեցության	Տեղական համայնքների գրասենյակներ	Նախքան շինարարական աշխատանքները	Ծանուցման փաստաթղթերի ստուգում Հարցազրույցներ շինհրապարակի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչների հետ	Ներառված է շահագործման գնի մեջ	ՆԿ, Խորհրդատու
Հանրային առողջություն եւ անվտանգություն	Ապահովել բնակիչների համապատասխան նախազգուշացումը	Հիմնական ճանապարհների տեսանելի մասերում, բնակավայրերին մոտ գտնվող տեղամասերի մոտ	Ամսեկան	Նախազգուշական նշանների ստուգում	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, ԻԳ, Խորհրդատու
Տեղական բնակչության զբաղվածություն	- Մշակել և իրականացնել աշխատողների ընդունման և աշխատավարձերի վճարման անխտրական քաղաքականություն - Շինարարական աշխատանքների համար աշխատողներ ընդունելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղի բնակչությանը	- Տեղական համայնքներ	Պարբերաբար, շինարարության ընթացքում	Հարցազրույցներ	Ներառված է շինարարության գնի մեջ	ՇԿ, Խորհրդատու



Գենդերային ասպեկտներ	Ապահովել աշխատանքային վայրում/ աշխատողների ճամբարում սեռական ոտնձգությունների բացարձակ անհանդուժողականություն Ուժեղացնել տարածքային իշխանությունների ներգրավվածությունը գենդերային խնդիրների հարցում (օր.՝ ստանալ բողոքներ կանանց կոմից)	- Բոլոր շինհրպարակները - Տեղական համայնքներ	Ամեն ամիս, շինարարության փուլի ընթացքում Եռամսյակային, շահագործման փուլի ընթացքում	Հարցազրույցներ կանանց հետ - Բողոքների ստուգում	Ներառված է շինարարու- թյան և շահագործ- ման գնի մեջ	ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ
Բողոքների լուծման մեխանիզմ	Ապահովել բողոքների լուծման մեխանիզմի իրականացումը և դրա արդյունավետությունը	- Տեղական համայնքներ	Ամսական	- Բողոքների ստուգում - Հարցազրույց աշխատողների հետ - Հարցազրույցներ համայնքների ղեկավարների և բնակիչների հետ	Ներառված է շինարարու- թյան և շահագործման գնի մեջ	ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ



ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «23» Մայիսի 2012 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

Վանաձորի Հովի. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Թատերական փողոց թիվ 3 թատրոնի մասնաշենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր թիվ 31/0012, 25.04.2012թ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՌԻԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-001-0004-0009

Մակերեսի չափը (հա)՝ 0.3846

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ



5. ԸՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՐՈՒԹՎԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Ի	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	06-001-0429-0009-001	Թատրոն	2868.83 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	06-001-0429-0009-002	Ավտոտնակ	123.68 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
3	06-001-0429-0009-003	Կաթնալատու ն	33.6 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
4	06-001-0429-0009-004	Մնացկետ	11.04 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
5	06-001-0429-0009-005	պարիսպ	35.75 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Տիգրան Պետրոսյան
Լոռի ՏՄ

զբաղեցրած պաշտոնը՝ Լոռի ՏՄ անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը
տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.





ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

PM72-2BEF-815C-A5A9



Փաստաթղթի
վավերականության ստուգում
ու էլեկտրոնային բնօրինակի
ներքինության հաստատում
իրականացվում է
http://verify.e-
gov.am կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ԼԹ-8411-25 19.09.2025թ.

Ձև N 1-2

Օբյեկտ **Կառուցում, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Հ. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքի կառուցում,**

(օբյեկտի անվանումը, կատարում, վերանորոգում, բաժանում վերականգնում, գործարկման նշանակության փոփոխություն)

Կառուցապատման մակերես՝ 1978 քմ, Ընդհանուր մակերես՝ 6950 քմ

(նախնական և ավարտական, հարկային)

Նախագծման փուլերը՝ **Նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, ռիսկայնության աստիճանը՝ IV**
Նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատարողի) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Լոռի, համայնք՝ Վանաձոր Վանաձոր ք. Թատերական փողոց 3, 06-001-0429-0009**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հորանաթի ծանցաթիղջը)

Կառուցապատող **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ / 02528489 /**

(կառուցարարության անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԳ ԳՈՒԹՔԻ ՆԿԱՏԱՍԻԲ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ԴԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԿԱՑԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 2218311**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրության սահմանված կարգով հորանաթի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրազեկվող հաստատող անդամներ)

(փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 19.09.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Ն Ա Գ Ծ Վ ՈՂ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ
սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Հասարակական կառուցապատման, բնակավայրերի

(հորանաթի դիրքը ըստ առաջին համայնքային միջավայրում, դրա նպատակային և գործարկման նշանակությունը)

2. (*) Հողամասի չափսերը

0.3846

(հորանաթի սահմանները՝ կողովի համապատասխան նշանակությամբ, մակերեսը(հա))

3. Հողամասի առկա վիճակը

Գոյություն ունեցող թատրոնի մասնաշենք, կաթսայատուն, պարիսպ

(շենքի և պարիսպի, շենքերի (այդ թվում՝ ճարտարապետական) արկարկությունը, (օգտագործման, նշանակության, հարկայնության, շինարարական կույքի և այլն), կառուցապատման, բարեկարգման և այլն)

4. (*) Տրանսպորտային
պայմանները

Թատերական փողոց, հրապարակ, Սոս Սարգսյան փողոց

(ճանապարհների արկարկությունը, երկաթուղային տրամադրման մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և
սարքավորումներ
(ջրամատակարարման,
կոյուղու,
գազամատակարարման, տաք
ջրի մատակարարման,
էլեկտրամատակարարման,
էլեկտրոնային
հաղորդակցության
համակարգեր)

չկա

(նախագծման հորանաթի կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)



7. Բնության հատուկ
պահպանվող և (կամ)
պատմամշակութային
հուշարձանների տարածքներ
(պահպանական գոտիներ)

չկան

(տվյալների անվանումը)

8. (*) Հատակագծային
սահմանափակումներ

չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներականայրուղային ենթակառուցվածքների և այլ
օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սնդիստությունը)

ՆԱԽԱԳԾԱՑԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ
սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային
պահանջներ

Նախատեսվեց նախարկ, ե/բ հիմնականախցով, նկուղային հարկով, 400
հանդիսատեսի համար նախատեսված թատրոնի մասնաշենք,
նախատեսվեց երկու դահլիճ: Պահեստային մասը, բեմի տեխնոլոգիական
մասը նախատեսվեց նկուղում: Նախատեսվեց գլխավոր ճակատի քանդակ և
վերաշարում նույնությամբ:

(նկերվել է ճարտարապետական օբյեկտության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից,
առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված
(կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման,
տանիքների, արտաքին դռների, պատուհանների համաձայնագրումների և գոմային բույսերի վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը
կարմիր գծից (մետր)

կարմիր գծով

9.2. (*) հեռավորությունը հարևան
հողակտորներից (օբյեկտներից)
(մետր)

12մ

9.3. (*) թույլատրելի բարձրությունը
(մետր)

մինչև 18մ

սահմանային հարկանքային բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀԸ, 0-6.02-
2006 «մեյքապլան շինարարության, Նախագծման տրամադրությամբ շինարարական նորմերով սահմանված պահանջների
ապահովման լիազորված հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության
գործակիցը (կառուցիչ,
(կառույցների) ընդհանուր
մակերեսի հարաբերությունը
հողամասի մակերեսին)

0,5

9.5. կառուցապատման տոկոսը
(կառուցապատվող (անջրանցիկ)
տարածքի հարաբերությունը
հողամասի տարածքին՝
տոկոսներով) (%)

50

9.6 կանաչապատման տոկոսը
(կանաչապատ տարածքի
հարաբերությունը հողամասի
մակերեսին՝ տոկոսներով) (%)

50

9.7 այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի
ու շինությունների քանդման կամ
տեղափոխման
(ապամոնտաժման) պայմանները
և աշխատանքների
հերթականությունը

քանդել թատրոնի գոյություն ունեցող մասնաշենքը, պահպանել գլխավոր
ճակատը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և
առաջին հարկերի տարածքների
օգտագործման պայմանները

նախատեսվեց նկուղ

12. (*) Ինժեներական ցանցեր և
սարքավորումներ

12.1 (*) ջրամատակարարում
կոյուղի, տաք ջրի
մատակարարում

ըստ տեխնիկական պայմանների

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)



12.2 (*) Էլեկտրամատակարարում	ըստ տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	ըստ տեխնիկական պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	ըստ տեխնիկական պայմանների (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երկնաչիվ տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	
12.6. աղբահանություն	
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	նախատեսել դրենաժ (տեխնիկական պայմաններ, ջրամբարային, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	նախատեսել ներքին բակի կանաչ գոտու բարեկարգում (կանաչապատման պայմանները, կանաչապատմում, ծառատառիմանական փողոց մեծ, ցանկապատմում, գոյաղբ և այլն)
15. Շինարարական նյութեր	բազալտ, ֆելզիտ, գլխավոր մոտքի հինքարերը վերաշարել (շինարարական նյութերի որակը որոշումն առաջարկությունները տեխնիկական, ճակատների լուծումների, պատմական դրվածքի, պատմականների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	ցանկապատ (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	ՀՀ ՇՆ 30-01-2023 (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	նախատեսել թեքահարթակ, վերելակներ, հարմարեցված սանհանգույցներ
19. Շրջակա միջավայրի պահպանում	շին հրապարակը մեկուսացնել ժամանակավոր ցանկապատով (շրջակա միջավայրը պահպանող աղբջրաբերական քաղաքային միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	միահերթ (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ աղբջրաբերական քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	մինչև 19.09.2027թ., նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, (կշիռն են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	Պետական համալիր փորձաքննություն, Պարզ փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծերի երաշխավորագրող՝ հոլանդական ինժեներական ընկերություն)
23. Միջանկյալ համաձայնեցում	Ելքային նախագծի համաձայնեցում համայնքապետարանի հետ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ (Պրոյեկտը մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը նախատեսված դիմումով շահագրգիռ մարմինների հետ ելքային նախագծի համաձայնեցում, կշիռն է նաև առաջադրանքի փորձաքննման հետադիմությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դիմումով)
24. Հասարակական քննարկումներ	հանրային լուսնների 2-րդ փուլ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված դիմում և կարգով)
25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում	ՀՀ ՔՏՀՄ մարմին, ՀՀ Առողջ. և աշխ. տեսչական մարմին, ՀՀ ԵԳԼ (Ելքում են տրվող օրենքի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հոլանդականների ու քաղաքային պաշտպանության և աղ թագրված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դիմումով՝ ինժեներական ելքակառուցվածքի սեփականատեր (օգտատիրոջ) հետ)
26. Փոստային բաժանորդային պահպանման տեղադրում	 (Ելքում են տրվող օրենքի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հոլանդականների ու քաղաքային պաշտպանության և աղ թագրված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դիմումով՝ ինժեներական ելքակառուցվածքի սեփականատեր (օգտատիրոջ) հետ)



27. Զաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

Պահպանել գլխավոր մուտքի ճարտարապետական լուծումը, քանդել, նորից վերաշարել գլխավոր ճակատը հին քարերով՝ նախապես համարակալելով:

28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ
(ստորագրություն, անուն, ազգանուն)

19.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ